

№№ 5—6 ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ 1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№№ 5—6

Հրաւէր Գարնան . . . . . Մ. Թամրազեանց։
Մանկական աշխարհահայեացք, կամ Լոյս և Մութ աշխարհները . . . . . Ղ. Աղայեանց։
Խաղ . . . . . Մուշեղ Մամիկոնեան։
Վահան Մամիկոնեան (Հայոց Պատմութիւնից) Ա. Բաբախանեան։
Սևանայ ծովակը (բանաստեղծութիւն) . . . . Գ. Ասատուրատրեանց։
Յովհաննէս Հուս (շարունակութիւն և վերջ) . Փ. Վարդանեան։
Թիթեռն ու Ճրագ (բանաս.) . . . . . Ընծայացի։

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ազնիւ բուստ . . . . . Ադ. Քիշմիշեանց

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապակենման թափանցիկ թուղթ։ Գազացած ջրի տեղափոխութիւնը։ Անուշահոտ քսուքներ սենեակների համար։ Ձմեռը սենեակում մարգագետին։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Հայերէն պարբերական հրատարակութիւններ։

ՋՈՒՌՃԱԼԻՔ

Հանելուկներ։ Կրկնաբառեր։ Առաջարկութիւն։ Շուտասելուկ։ Բերուս։ Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների, առաջարկութիւնների, բերուսի բացատրութիւնը և բերուսի բացատրողներ։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Պ. Պ. Ադամեանի «Շէքսպիրը և իւր Համլէթ ողբերգութեան աղբիւրն ու քննադատութիւնները» Ղ. Ա.
«Լեզու Ուսումնական Երգ»-ի լեզուի առիթով . . Ղ. Աղայեանց։
Մահացուցակ Կոստանդին Մելիքեան։ Խառն Լուրեր Գ. Զմշկեանի յօրելեանը։ Հանելուկ վճռողներ։ «Աղբիւր» նուիրողներ։ Արութիւն եւ Մանուէլի բաժանորդներ։ Մի ծեռնադրութիւն։ Մի նոր ուսումնարան։ Նոր հրատարակութիւններ։ «Աղբիւրի» Թղթակցութիւններ։ Յայտարարութիւններ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 5 հատ ութ կոպէկանոց մարկաներ և անդորրագիրը (կամ հասցէի հին բանալիրը), որի փոխարէն նորը կուղարկուի, հակառակ դէպքում դարձեալ կուղարկուի հին հասցէով։

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ,

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

Հրատարակութիւն Վիէննայի Մխիթարեան Միաբանութեան

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը։

Բաժանորդագրութեան գինն է կանխիկ 8 ֆր. Վեցամսեայ 5 ֆր. Մէկ թիւառանձին կը վաճառուի 1 ֆր.։

Հասցէն՝ A la Rédaction de la Revue „Hantess“ Au Convent des RR. PP. Mechitharistes A Vienne (Autriche) VII. Mechitharistengasse 4.

ՏԵՏԵՍ

Ամսօրեայ Հանդէս

ժողովրդական տնտեսագիտութեան

Տարեկան գինն է Հանապարհածախսով 13 զրուշ։ Հասցէն՝ Կ. Պոլիս. Զեմբրլէյ խան № 14 Ֆիւրէկհիւլէր փողոց, Ղալաթիա։

Տնօրէն ՈՎ ՐԻՍՏԻՍ ՅԱԿՈՎԲԵԱՆ.

L'AMI DES ENFANTS ILLUSTRÉ OU L'ÉDUCATION

A l'Ecole et dans la Famille. Directeur: l'Abbé Roussel.

Neuvième année; abonnements un an: 10 fr. Etranger, 12 fr. Un numèro, 30 centimes. Administration, 40, rue La Fontaine, Paris-Auteuil dépot: 15, rue Fékou (près saint-Sulpice) Paris.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ

Մանկավարժական ամսագիր. տարեկան գինը 5 ր.։ Հասցէն՝ Редакція „Манкаваржаноцъ“ СПБ. Невскій пр. д. Арм. церкви. *Խմբ.-Հրատ. Խորէն Ծ. վ. Ստեփանէ.*

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	ռ.	կ.
1) «Աղբիւրք» 1883 Թ. փառակազմ	10	—
Նոյնը անկազմ	8	—
2) » 1884 Թ. փառակազմ	4	—
Նոյնը անկազմ	3	—
3) » 1885 Թ. փառակազմ	10	—
Նոյնը անկազմ	8	—
4) » 1886 Թ. փառակազմ	10	—
Նոյնը անկազմ	8	—
5) Փայտաշէն խրճթից՝ սպիտակ տունը (Ջեմս Գարֆիլդեի կենսագր.) պատկերազարդ	„	60
6) Հսկայ-մրջիւն (պատկերազարդ)	„	40
7) Ժան Բատիստ Լիւլիի մանկութիւնը	„	10
8) Ոսկի Հինգիկ I սերիա . .	„	30
Նոյն „ II սերիա . . .	„	05
9) Բուսական աշխարհից՝ մշակուած և անմշակ ծառի կեանքը	„	30
10) Զարմանալի Արամի արկածները (38 պատկերներով) .	„	50
11) Ֆրիտիոֆ գիւցաղն (նորմանական հին զրոյց, պատկերազարդ)	„	40
Ն. Տ.-ԱՒԵՏԻՔԵԱՆ Քնաբ խօսնակ	„	50
ԼԻՏՎՕՍ Պօղնանի ուսուցչի օրագրից	„	20
ԱԼՖՕՆՍ ԴՕԴԷ Երկու մանրավէպ	„	15
ԱՆԴԵՐՍԷՆ Սոխակ և խոզաքաղ	„	20
ԴԻԿԷՆՍ Հարս և սկեսուր .	„	15
Կ. Մ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ Ղբլբցի կընտանոց պընը-փէշակը (Ղարաբաղի կեանքից)	„	20

ՄՇԱԿ

Հրատարակվում է Թիֆլիզում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռ. է, վեց ամսուանը 6 ռ.։

Գրուել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաքենկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը)։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրուելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ». իսկ արտասահմանից. Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK»

Խմբ.-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ



Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ. տարեկան գինը 4 ռ.։ Հրատարակվում է Պոլսում. ստորագրուել կարելի է «Աղբիւր» ամսագրի խմբագրատանը։

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԹՈՒՄ

Հանդէս ամսեայ

Հրատարակվում է Կ. Պոլսում.

Տնօրէն խմբ. Տաղավարեան

Բաժանորդ գրուել կարելի է «Աղբիւրի» խմբագրութեանը։ Գինն է 2 ր. 50 կ.

ԱՐԱՐԱՏ

Կրօնական, պատմական, բանասիրական ամսագիր. տարեկան գինը Ռուսաստանում՝ 4 ր.։ Հասցէն՝

Св. Эчміадзинъ, Ред. „Араратъ“.

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆԻ

Մանկական Պարտէզ երկու սեռի երեխաների միասնաբար ուսման համար և օրիորդաց գիշերօթիկ ուսումնարան։

ԱՂԲԻՒՐ

ՄԻՇՄԱՍԵՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

(Երեխաների եւ դաստիարակների համար)

Հրատարակվում է միեւնոյն դիրքով, միեւնոյն ուղղութիւնով եւ նոյն աշխատակիցների մասնակցութիւնով։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“, իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal „AGBUR“.

Խմբ.-Հրատ. Տ. Նաղարեանց։

Լոյս տեսաւ

Գ. Կաֆեանի թարգմանութեամբ

ՕՐ. ՍԻՒԶԱՆ ԿՕՐՆԱՅԻ

ԵՐԵԽԱՆԵՐԸ

ԵՒ

ԴՐԱՆՑ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Վերնագրով մանկական պատկերազարդ շքեղ հրատարակութիւնը։ Գինը 50 կ. է, «Աղբիւրի» բաժանորդների համար 40 կ.

Ծախվում է «Աղբիւրի» խմբագրատանը եւ Թիֆլիզի յայտնի գրավաճառանոցներում։

ԲԱԶՄԱՎԷՊ

Եռամսեայ պատկերազարդ հանդիսարան.

Բաժանորդագրութեան գինն է կանխիկ վճարելի. 10 ֆռ. (4 ռ.)

Հասցէն՝ Au Rédacteur de la *Revue Polyhistore*, à Venise, Ile de St. Lazare.

РОДНИКЪ

Дѣтск. иллюстр. ежемѣсячн. журн. подпис. цѣн. съ прилож. „Воспит. и Обучен.—6 р. Въ видѣ преміи год. подпис. пол. тетр.-альб. „По Рус. Землѣ“.

Ред.-Изд. Е. Сысоева. Подпис. цен. 6 р. съ пересыл. С. П. Б. Никольская площ. д. № 4.

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№№ 5–6

ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2
1887

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Мая 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ՀՐԱՒԷՐ ԳԱՐՆԱՆ

Ունվար, դու դնա, փետրվար, սրի,
Դուցէ թէ բերես մի փոքր բարի.
Դառնաշունչ հողմերն մեզ սպանեցին,
Ու ազատ կեանքերս բանտարկեցին։

Խնդրում ենք՝ շուտ գաս, Փետրվար ամիս,
Թէև դու չես մեր ծաղկազարդ Մայիս.
Սակայն քեզանից գարնան հոտ կուգայ,
Եւ մեզ խնդութեան աւետիս կուտայ։

Դիտե՞ս ովքեր են քեզ խնդրողները,
Հոգով ու սրտով փափագողները.—
Դպրատանց մատաղ տղայքս ու աղջկունք,
Որ ցրտի ձեռքից թափենք արտասունք։

Դէհ, շարժիր տեղիցդ, Մարտին էլ կանչէ,
Քանզի Մարտի մէջ՝ սար-ձոր կանանչ է.
Իսկ թէ Ապրիլն էլ գայ ու միանայ,
Ինպիտան ցրտիցն էլ չենք վախենայ։

Թող ինչքան կամի պաղ քամին փչէ,
Բայց մեզի համար էլ երբէք հոգ չէ.
Գիտենք որ ձեզնից յետ կըգայ գարուն,
Կտայ մանկանցս կեանք ու բերկրութիւն։

Սիրելի Մայիս, շուտ արի հանդէս,
Որ ծաղիկներով դաշտերը ծածկես,
Մռայլ Փետրվարն ու մեր գիժ Մարտը,
Թող գնան մտնեն ան-ել թակարդը։

Իսկ տկար մանկանցս, Տէր Աստուած հզօր,
Որ միշտ կըյիշենք անունդ փառաւոր,
Տուր զգաստութիւն և շնորհ ուսման,
Ամեն օր սիրով դիմենք վարժարան։

ՄԱՅԱԿ ԹԱՄՐԱԶԵԱՆՑ



ՄԱՆԿԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՅՔ

ԿԱՄ

ԼՈՅՍ ԵՒ ՄՈՒԹ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ

Երեխէրք, նայեցէք այս վայր ընկած չինարի ծառին, տեսէք ինչպէս մեկնուել է, և արդէն սկսել է փթիլ: Մի ժամանակ սա դալար է եղել և ձեզ նման փոքր: Բայց երբ որ սկսել է բարձրանալ, շատ գոռոզացել է: Պտուղ չի ունեցել, որ ճղները կռացնէր, գլուխը խոնարհեցնէր: Աստուած սրան բարձրանալու շնորհք է եղել տուած, բայց սա իր գլխի պատիւը չի իմացել, Աստուծոյ ողորմութիւնը չի հասկացել: Այս յիմարն ուզեցել է այնքան բարձրանալ, որ գլուխը երկինք հասցնէ և իր ճղներով երկնքի սիրտը ծակծրկէ: Աստուած բարկացել է սրա գոռոզ մտածութեան վրայ և ահագին բարձրութիւնից տապալել է»:

Այս խօսքն ասողը Գիւլնազ տատն էր, որի անունը դուք, իմ փոքրիկ ընթերցողներ, պէտք է որ լսած լինիք: Լուսահոգին ամեն բան գիտցող մի պառաւ էր և շատ երեխայասէր: Օրը ցերեկով բոլոր երեխէքս հաւաքուել էինք մօտը, յոգնած լինելով շատ խաղալուց, որ տատի-

կը մի բան պատմի մեզ, որ մենք Համ լսենք, Համ Հանգըստանանք։ Դուրսը, կանաչ խոտի վրայ, մի տանձենու շուաքում էինք նստոտել։ Եղանակը գարնանային էր։

—Մենակ ծառերը չեն, որ յիմարաբար դուռդանալ գիտեն. մի ժամանակ մարդիկն էլ են այդպէս եղել։ Նըրանք էլ մի աշտարակ են շինել այն մտքով, որ նրա ծայրը երկինք Հասցնեն և այնտեղից Աստուծոյ Հետ կըռվիւ սկսեն։ Աստուած Համբերել է մի առ ժամանակ, մինչև նրանք աշտարակի ծայրը մօտեցրել են երկնքին և սկսել են աւելի դուռդանալ։ Դրա վրայ Աստուծոյ Համբերութիւնը Հատել է. նրանց աղմուկից ու աղաղակներից ձանձրացած, սաստիկ քամի է բարձրացրել և աշտարակի ամեն մի քարը, ամեն մի քարփիչը ուրիշ ուրիշ աշխարհք է գցել . . .

—Ո՜ւհ, ինչքա՜ն բարձր է եղել այդ աշտարակը, որ ծայրը մինչև երկինք է Հասել, բացագանչեց երեխաներից մէկը։

—Աշտարակը չի եղել բարձր, ծաղրեց նրան մի ուրիշը, այլ երկինքն է եղել ցածր։ Այնպէս չէ՞, տատիկ, որ երկինքն առաջ մեզանից շատ մօտիկ է եղել։

—Այո՛, երկինքը մեզանից մօտիկ է եղել, բայց այդ եղել է աշտարակը շինելուց առաջ։ Աշտարակը շինելիս երկինքը բարձր է եղել, և աշտարակն էլ այնքան բացձրացրած են եղել, որ նրա գլուխը գետնքից երևալիս չի եղել. այնքան բարձր է եղել, որ ձմեռը նրա վրայ բարձրացողը մինչև ամառը Հազիւ է եղել ցած գալիս... Բայց դրանից առաջ, ճշմարիտ է, երկինքը շատ մօտիկ է եղել մեզանից, այնքան մօտիկ, որ երեխէրքը գնդակ խաղալիս շատ անգամ երկնքին է եղել դիպչում գնդակը և այնտեղ էլ մնում։

—Ինչո՞ւ էր այնտեղ մնում գնդակը, տատիկ. թող դիպչէր, էլ յետ վայր ընկնէր—Հարցնում էինք մենք և

մի և նոյն ժամանակ աւելի մօտենում տատիկին, որ լաւ լսենք նրա պատմութիւնը երկնքի մօտիկութեան մասին։

—Նրա համար էր այնտեղ մնում, որ երեխէրքը միւս անգամ երկնքին չխփեն և Աստուծուն անհանդիստ չանեն։ Հապա չէ՞ք լսել, որ մէկ անգամ Արևամանուկը պատահմամբ իր նետը դիպցրել էր Արեգակին, նա էլ անիծել էր Արևամանուկին դրա համար և ասել. «Այսուհետև ցերեկները չապրիս դու, որ իմ երեսը չտեսնես»։ Այնուհետև խեղճ Արևամանուկը ցերեկները մեռնում է եղել և գիշերը կենդանանում։ Նրան այդ պատժից ազատում է Արևահատը՝ Օձամանուկի նշանածը։ Բայց Արևահատի վերջը ձեզ չեմ պատմել կարծեմ։

—Հիմա պատմիր, տատիկ, հիմա պատմիր, աղաղակեցին երեխաներից մի քանիսը, իսկ միւսները զանազան հարցումներ արին երկնքի մօտիկութեան մասին. . . .

***

Գիւլնազը մի բան պատմելիս պարապ չէր նստում. նա կամ գուլբայ էր անում, կամ իլիկ մանում և կամ ակնոցը քթին դրած՝ երեխաների պատռտած շորերն էր կարկատում։ Երբեմն էլ՝ ձեռքի գործը մի կողմ էր դնում և երեխաներից մէկի կամ միւսի գլուխը քաշում դնում ծնկան վրայ, որ տեսնի հարսները լա՞ւ են լուացել երեխի գլուխը և մաքրել թէ ոչ։ Նա մի և նոյն ժամանակ առանց ուշադրութեան չէր թողնում տան հոգսը. շատ անգամ միջահատում էր իր պատմութիւնը և զանազան հրամաններ տալիս այս և այն հարսին։ Երեխէրքը գիտէինք այդ և ամենայն զգուշութեամբ փաղաքշում էինք նրան, փայփայում, որ նա ուրիշ ոչ մի բանի վրայ ուշադրութիւն չդարձնէ, այլ միայն մեզանով զբաղուի, մեր հետաքրքրութիւնը լցնէ։

***

—Այո, մի ժամանակ երկինքը շատ մօտիկ էր երկ-

ըից—շարունակեց տատիկը։—Երկնքից լսվում էր Աստուծոյ ձայնը. Նա այնտեղից խօսում էր մարդոց հետ և յայտնում էր նրանց իր կամքն ու հրամանը. պատուէրներ էր տալիս և հասկացնում էր, թէ ինչ պէտք է անեն և ինչ չպէտք է անեն։

«Ուղիղ կէս գիշերին լսվում էին հրեշտակների քաղցր մեղեդիքը։ Աքաղաղներն ամենից առաջ էին լսում նրանց ձայնը և իրանց միաձայն կանչիւնով զարթեցնում էին մարդկերանցը, որ վեր կենան և հրեշտակների հետ միասին փառաբանեն Աստուծոյ հազար ու մէկ անունը. . .

«Աքաղաղները հիմա էլ են լսում հրեշտակների ձայնը», աւելացնում էր տատիկը և խոր հոգոց քաշում մի այնպիսի ձևով, որ կարծես ինքն ապրած լինէր այն հին ժամանակումը, իր ականջովը լսած լինէր Աստուծոյ ձայնը և հրեշտակների մեղեդիքը, և այժմ զրկուած այն երջանկութիւնից։

***

Զարմանալի մի աշխարհ է մանկական աշխարհը. ափսոս որ մարդ խելահաս եղած ժամանակ՝ էլ չի կարողանում մտնել այդ աշխարհը, որ իր առաջուան լսածները մէկ անգամ էլ լսէ։ Ամենայն ինչ, որ մանկութեան ժամանակ մօտիկ էր, մեծացած ժամանակ հեռանում է. ինչ որ հեշտ էր, դժուարանում. ինչ որ պարզ և հասկանալի էր, խաւարում է և անըմբռնելի դառնում։ Ինչքան հիմա ես յիշում եմ, մանկութեան ժամանակ մեզ համար ոչ մի վերացական բան չկար, ամենայն ինչ տեսանելի և շօշափելի էր։

—Առաջ Մութ աշխարհն էլ է եղել մեզանից մօտիկ, ասում էր Գիւլնազ տատը։ Պատահել է, որ աղջկէրքն իլիկ մանելիս՝ յանկարծ թելը կտրուել է և իլիկը մի հորի միջով ընկել է Մութ աշխարհը։ Եթէ իլիկ մանող աղջիկը մի բարի այջիկ է եղել, Ներքի աշխարհի

բարի պառաւները նրա իլիկը վեր նետելով՝ յետ են դարձրել նրան։ Բայց հիմա Ներքի աշխարհն էլ է հեռացել մեզանից։

Գիւլնաղ տատը մի երկար հեքիաթ էր պատմում, որի մէջ Մութ կամ Ներքի աշխարհի մասին մի այսպիսի կտոր կար—

. . . . Անտես-Աննմանին դէվը փախցրեց։ Թագաւորազն Գուրգէնը, որ Աննմանի փեսացուն էր, վեր առաւ իր երկու եղբայրներին և դէվի հետքովը գնաց և գտաւ նրան մի հորի մէջ։ Դէվը մրափած էր։ Այդ երևում էր նրանից, որ հորի բերանից ծուխ ու բոց էր բղխում։ Այդ դէվի արտաշնչութիւնն էր։ Մեծ եղբօրը կախեցին հորի մէջ, որ երթայ ազատէ Աննմանին. նա չկարողացաւ կրակին դիմանալ և աղաղակեց—վա՜յ, այրուեցայ, այրուեցա՜յ»... Նրան դուրս քաշեցին և միջնակին կախեցին. նա էլ աղաղակեց—վա՜յ, այրուեցա՜յ։ Նրան էլ դուրս հանեցին։ Յետոյ Գուրգէնն ասաց. «Հիմա ինձ կախեցէք, և ինչքան էլ աղաղակելու լինիմ, թէ այրուեցայ, վեր չհանէք։ Եւ ճշմարիտ՝ Գուրգէնը գնաց մինչև հորի յատակը, առանց ձայն հանելու։ Այնտեղ նա գտաւ Անտես-Աննմանին։ Նրա ծնկան վրայ էր դրել հրէշ դէվն իր գլուխը և քառասուն օրով մրափել։ Այնտեղ կախած էր և դէվի թուրը։ Միայն այն թրովը կարելի էր կտրել նրա գլուխը և այն էլ մէկ զարկով միայն. եթէ երկրորդ անգամ զարկէին, նա կրկին կրկենդանանար։

Աննմանը ծունկը դուրս քաշեց թէ չէ՝ դէվը զարթեցաւ և իսկոյն ոտքի կանգնեց, բայց և մի և նոյն ժամանակ թուրը պսպղաց և դէվի գլուխն ընկաւ գետին։— «Մէկ էլ զարկիր, մէկ էլ, մէկ էլ»... ղղղացրեց գլուխը, բայց Գուրգէնը չզարկեց և ասաց. «Ես մէկ անգամ եմ ծնուել իմ մօրից և ոչ թէ երկու անգամ»։

Հրէշ դէվին սպանելուց յետոյ Գուրգէնն ու Ան-

նմանը պտրտեցին դէվի ստորերկրեայ ընդարձակ բնակարանը և ինչ որ գանձ ու հարստութիւն ունէր, բոլորն էլ ժողովեցին և վեր բարձրացնել տուին։ Երբ որ մնացին միայն իրանք, սկսեցին երկար վիճել, թէ ով իրանցից առաջ բարձրանայ։ Աղջիկը տեսաւ որ Գուրգէնը յամառութեամբ չի ուզում ինքն առաջ բարձրանալ, ասաց նրան.
—Ես շատ կասկածում եմ, թէ մի դուցէ քո եղբայրները քեզ վեր չհանեն և դու մնաս հորի մէջ։ Եթէ իմ նախազգացմունքս կատարուելու լինի, դու կերթաս դէվի գոմը, այնտեղ քո առաջդ կըգան մի սև այծ և մի սպիտակ ոչխար. եթէ կարողանաս ոչխարի վրայ նստել, նա քեզ վեր կըհանէ Լոյս աշխարհք, իսկ եթէ չկարողանաս, և այծն ընկնի տակդ, նա քեզ կըտանէ Մութ աշխարհ, որտեղից դու այլ ևս Լոյս աշխարհ ընկնիլ չես կարող։ Այս ասելուց յետոյ Աննմանը վեր բարձրացաւ, իսկ Գուրգէնին նրա անիրաւ և անգութ եղբայրները թողեցին հորի մէջ . . .

Գուրգէնը շատ աղաչեց, պաղատեց և տեսաւ որ իր եղբայրների սիրտը քարացել է, ճարը կտրած՝ գնաց դէպի դէվի գոմը, որ փորձէ իր բախտը—նստէ ոչխարի վրայ։ Բայց անիրաւ այծը այնքան ճարպիկ էր, որ ոչխարին պոզահարելով մի կողմ ձգեց և ինքն ընկաւ Գուրգէնի տակը և տարաւ ձգեց Մութ աշխարհը։

Այդ աշխարհն էլ մեր աշխարհի նման քաղաքներ և գիւղեր ունէր և մինչև անգամ գիշեր ու ցերեկ կար, թէև ասվում էր Մութ։ Նա մի քաղաքում իջևանեցաւ մի պառաւի տան և նրանից լսացաւ, որ քաղաքացիք ջրի պակասութեան համար շատ նեղութեան մէջ են։ «Ամբողջ քաղաքում մի աղբիւր կայ միայն, բայց նրանում էլ բոյն է դրել մի ահագին վիշապ և ամենայն օր մէկ աղջիկ են տանում զցում նրա երախը, որ ապա թոյլ է տալիս ջուր վերցնելու։ Էգուց էլ հերթը մեր թագաւորի միամօր աղ-

ջկանն է, նրան պիտի տանեն ահռելի դաղանի բերանը ձգեն», ասաց պառաւը և սկսեց լալ։

Գուրգէնը շատ ծարաւած էր, այս որ լսեց, նրա ծարաւն աւելի ևս սաստկացաւ։ Միւս առաւօտ, դեռ լոյսը չբացուած, վեր կացաւ նա և պառաւին էլ զարթեցրեց, որ տանէ աղբիւրի տեղը ցոյց տայ իրան։ Պառաւը տարաւ նրան և հեռուից ցոյց տուաւ աղբիւրը։ Գուրգէնը՝ դէվի թուլը ձեռին՝ մօտեցաւ և տեսաւ մի լիճ, որի մէջ մեկնուել էր վիշապը մի ահագին լեռնակղզու պէս։ Ամբողջ լիճը ժահահոտութեամբ և ապականութեամբ թունաւորուած էր։ Վիշապի գլուխը դտնվում էր աղբիւրի ակնումը, որ բղխում էր մի լայնաբերան քարայրից։ Նա անշարժ էր, կարծես թմրած լինէր կամ մրափած։

Վիշապի գլխավերևը նոր արդէն մի ծառից կապել էին թագաւորի աղջկանը, որին պիտի կուլ տար վիշապը մի քանի բոպէից յետոյ։ Աղջիկն արդէն մեռելի գոյն էր ստացել։ Գուրգէնը մօտեցաւ նրան, կապերն սրձակեց և սիրտ տուաւ, որ չվախենայ։ Թուրը ձեռին մօտեցաւ վիշապին և այնպիսի մի հարուած տուաւ նրա վզին, որ վիշապը երկու ահագին կտոր դարձաւ, իսկ լիճն արեան ծով։ Թագաւորի աղջիկը ձեռքը թաթախեց արեան մէջ և Գուրգէնի մէջքին նշան դնելով, ինքը վազեց տուն, որ թագաւորին յայտնէ եղելութիւնը։ Հաւաքուեցան բոլոր քաղաքացիք և քաւասուն ջուխտ գոմշով հաղիւ կարողացան ամեհի դազանի դէշը դուրս քարշել այնտեղից և մաքրել աղբիւրը։

Թագաւորն ուզեց վարձատրել Գուրգէնին, և մունետիկ ձգեց քաղաքի մէջ, որ փնտրեն նրան և բերեն, և գտան նրան թագաւորի աղջկան դրած նշանով։

Թագաւորն ասաց Գուրգէնին. «Դու որ փրկեցիր ինձ և իմ ժողովրդին չար վիշապի դերութիւնից, այսօր դու

ես մեր տէրը և թագաւորը. ուզիր իմ աղջիկս և իմ տեղ թագաւոր եղիր։

Գուրգէնը պատասխանեց. «Ես այս երկրիցը չեմ. ես Լոյս աշխարհքիցն եմ ընկել այստեղ». և սկսեց պատմել իր գլխի անցքը և յետոյ աւելացրեց. «Եթէ կարողանաք ինձ Լոյս աշխարհք գցել կրկին, ես ուրիշ բան չեմ ուզիլ ձեզանից։

Թագաւորն ասաց. «Այդ անհնարին բան է. Լոյս աշխարհքը շատ և շատ բարձր է մեզանից. ո՞վ կարող է քեզ վեր թռցնել և տանել այնտեղ։

Գուրգէնն ասաց. «Ինչպէս լինի, ես պէտք է վեր բարձրանամ. քո առաջարկութիւնը ես ընդունել կարող չեմ։

Թագաւորն ասաց. «Դո՛ւ գիտես. բայց որ չկարծես, թէ ես ընդդէմ եմ քո գնալուն, ես կրժողվեմ իմ աշխարհի բոլոր գիտուններին, թող նրանք մեզ ասեն, թէ արդեօք մի հնար կա՞յ վեր բարձրանալու։ Եւ մինչև այդ, իմ իշխանութիւնը և բոլոր հարստութիւնս քեզ եմ յանձնում. . .

Թագաւորը ժողովեց իր բոլոր աստղաբաշխներին, իմաստուններին և յայտնեց նրանց Գուրգէնի ցանկութիւնը։ Նրանք ասացին, թէ հին ժամանակներում, ճշմարիտ է, Ներքին և Վերին աշխարհների մէջ սերտ յարաբերութիւն է եղել, բայց յետոյ՝ մեր մեղքիցն է եղել, թէ պատահմամբ, մեր աշխարհը ցածրացել է, առաջ քիչ և յետոյ շատ։ Լսած ենք, որ մեր հեռացած ժամանակն էլ մի սանդուխք է եղել և այդ սանդուխքով արդար մարդիքը վեր բարձրանալիս և վայր իջնելիս են եղել, բայց հիմա այդ սանդուխքն անհետացել է, էլ չի երևում»...

Այսպէս Գուրգէնը մնաց Մութ աշխարհում մոլորուած։ Սկսեց պտրտել զանազան տեղեր, հարց ու փորձ անել և ոչ մի տեղից մի դուռը չգտաւ վեր բարձրանալու։

Մէկ օր դուրս էր եկել որսորդութեան։ Շատ մանր գալուց յոգնելով՝ նստեց մի Հսկայական ծառի տակ, որ փոքր ինչ Հանգստանայ, մէկ էլ մի ծվծվոց լսեց ծառի վրայից. նայեց, և... ի՞նչ տեսնի... Ծառի վրայով սողում էր մի ահռելի սև վիշապ դէպի մի մեծ բոյն, որի մէջ լիքն էին մեծ-մեծ թռչուններով, բայց դեռ չէին թևաւորուած։ Երևում էր, որ դրանք ձագուկներ էին մի Հրսկայական թռչունի։ Այդ ձագուկները օձին տեսնելով սարսափի մէջ էին ընկել և սկսել էին ծվծվալ։ Այս որ տեսաւ Գուրգէնը, առաւ իր նետաղեղը և ուղղակի շեշտեց վիշապի գլխին և վայր կործանեց։ Յետոյ Հանեց դէվի թուրը և վիշապին կտոր-կտոր անելով, մի ահագին բըլուր շինեց։ Այս բարեգործութիւնից և քաջութիւնից սիրտը մխիթարուած, պառկեց ծառի ստուերումը և խոր քընի մէջ մտաւ։

Այս անցքից մի քիչ յետոյ թռչունների մայրը թռուած եկաւ և Գուրգէնին տեսնելով այնտեղ պառկած, կարծեց, թէ նա է իր թշնամին, որ ամենայն տարի կոտորում է իր ձագերին։ Նա խլոյն յետ դարձաւ և իր ճանկերով մի ջաղացաքար, թէ ահագին ժայռ վերցրած բերաւ որ ձգէ Գուրգէնի վրայ։ Այս որ տեսան ձագուկները, մի սարսափելի ծվծվոցով և աղաղակով զգուշացրին իրանց մօրը և հասկացրին, որ Գուրգէնը ոչ թէ նրանց թշնամին, այլ իրանց ազատարարն է։

«Նայիր, ասացին, մայրիկ, այդ բլրի վրայ և տես ինչ գազան է. դա գալիս էր, որ մեզ ուտի, և այդ մարդն էր, որ սպանեց դրան և մաս-մաս արաւ»։ Այս որ լսեց մայր թռչունը, երախտագիտական զգացմունքով լցուած, ժայռը տարաւ առաջուան տեղը դրաւ և վերադարձաւ իր ձագուկների մօտ,

Գուրգէնը դեռ քնած էր։ Ծառի ստուերն անցել էր միւս կողմը և արևն ընկել էր Գուրգէնի վրայ։ Օրը շատ

շոգ էր։ Մայր թռչունը, որ ասվում էր Ջումբութ-Ղուշ, չուզեց Գուրդէնին զարթեցնել. նա իր հսկայական թևերը փռեց ամպվանում պէս և շուտ-արաւ Գուրդէնի վրայ, որ նա հով-հով քնէ։ Վերջը, Գուրդէնը որ զարթեցաւ, կարծեց, թէ մթնել է արդէն, բայց թռչունը որ թևերը յետ քաշեց, կրկին լուսացաւ և Գուրդէնը տեսաւ հսկայ Ջումբութին, որ խօսեց Գուրդէնի հետ և ասաց.

—Ով աղնիւ երիտասարդ, դու իմ փրկիչն ես երկրնքից իջած. դու այնպիսի մի բարերարութիւն ես արել ինձ, որ չգիտեմ ինչով կարող եմ վարձատրել քեզ։ Ահա ուղիղ հարիւր տարի է, որ ես չէի կարողանում ազատել իմ ձագերին այդ անզութ դազանի ձեռից։ Այսօր դու փրկեցիր ինձ դրա ձեռքից, ազատեցիր իմ ամբողջ սերունդը։ Օ՜... եթէ դա դողի պէս չհետամտէր, եթէ ես կարողանայի գոնէ մէկ անգամ տեսնել դրան, դրա գլուխը կըջախջախէի... «Ով պատուական և քաջ երիտասարդ, ինչ ես կամենում, որ ես քեզ համար ձեռք բերեմ. ո՞ր թագաւորութիւնն ես ուզում, որ քեզ տամ. ո՞ր թագաւորի աղջիկն ես ուզում, որ գնամ բերեմ. որքան հարստութիւն ես ուզում, որ աշխարհիս ամեն ծայրից հաւաքեմ բերեմ քեզ համար. ասա ինձ և ամենայն ինչ մի ակնթարթի մէջ կրկատարեմ ես։

—Ես ոչինչ չեմ ուզում, պատասխանեց Գուրդէնը քնաթաթախ, աչքերը տրորելով... ես ոչինչ չեմ ուզում, այլ միայն Լոյս, Լոյս—Աշխարհք, կարո՞ղ ես տանել ինձ Լոյս—Աշխարհք . . .

—Լոյս—Աշխարհք... բացագանչեց Ջումբութը։ Ուրեմն դու այնտեղից ես ընկել մեր աշխարհը, և ինչ հրաշքով։

Գուրդէնը պատմեց իր գլխի անցքը։

—Շատ լաւ, ասաց Ջումբութը, ես քեզ կրտանեմ Լոյս—Աշխարհք, թէպէտ դա մի շատ դժուար ճանա-

պարհորդութիւն է թէ ինձ համար և թէ քեզ համար։ Քառասուն օր հաղիւ կարող ենք հասնիլ։ Միշտ թռած պիտի գնամ. իջնելու տեղ չկայ։ Մեզ հարկաւոր է քառասուն օրուան պաշար վերցնել հետներս. քառասուն ոչխար և քառասուն տիկ ջուր։ Դու կերթաս այդ տկերն ու ոչխարները կբերես թագաւորից և մենք ճանապարհ կընկնինք տասն օրից յետոյ, երբ որ ձագուկներս թռուցած կլինիմ։

Գուրգէնը՝ ճանապարհ ընկնելու օրը՝ քառասուն ոչխար մորթեց և ամեն մէկը չորս կտոր արաւ և դարսեց պարկերումը, տկերն էլ ջրով լցրեց, բոլորը դարսեց Զումրուխթի վրայ և ինքն էլ նստեց վրան։ Զումրուխթն ասաց. «Եթէ գլուխս աջ կողմդ մեկնեմ, մի կտոր միս կըզցես բերանս, իսկ եթէ ձախ՝ տկի բերանը կրդնես բերանումս»։ Այս ասաց Զումրուխթն ու թռաւ և ամպերը ճեղքելով՝ բարձրացաւ դէպի Լոյս—Աշխարհք։

Քառասուն օրը լրացաւ, բայց նրանք դեռ տեղ չէին հասել։ Մսի պաշարը հատել էր։ Զումրուխթը գլուխը մեկնեց դէպի աջ. Գուրգէնը այլ ևս միս չունէր, որ զցէր բերանը։ Հանեց թուրը և իր ոտքից մի կտոր միս կտրեց և զցեց Զումրուխթի բերանը։ Սրանից յետոյ մի ժամ չանցած, Զումրուխթն իջաւ Լոյս—Աշխարհքի վրայ։ Գուրգէնը վայր իջաւ արիւնաթաթախ և չկարաց ոտքի վրայ ուղիղ կանգնել, ոտքի ջլերը կտրատել էր։ Զումրուխթն ասաց. «Գուրգէն, ես քո միսը չկերայ. հանիր, ահա բերանումս է, դիր տեղը և իմ թևս քսիր վրան, իսկոյն կաւոդջանայ»։ Գուրգէնն էլ այնպէս արաւ և իսկոյն առողջացաւ։

Յետոյ Զումրուխթը Գուրգէնին մի քանի խրատներ տուաւ, թէ որտեղ պիտի գտնէ Աննմանին, իսկ ինքը, նոր պաշարով բեռնաւորուած՝ մնաս բարով ասաց Գուրգէնին և դարձաւ կրկին դէպի Ներքի աշխարհը . . .

Ահա թէ ինչ էր պատմում Գիւլնազ տատը Մութ

կամ Ներքի աշխարհի մասին։ Երկինք գնալը այսքան դժուարութիւն չունէր։ Արևահատը Արևամանուկին ցերեկուայ մահից ազատելու համար, մի ջուխտ երկաթէ տրեխ է հագնում և մի երկաթէ գաւազան է բռնում ձեռին և ճանապարհ է ընկնում դէպի արևմուտք։ (Այսպէս էին անում առ Հասարակ, որոնք որ ուզում էին Աստուծոյ մօտ գնալ։ Այնքան գնում էին, որ տրեխները մաշվում էր, գաւազանի ծայրը կոտրվում։ Այդ նշան էր, որ արդէն աշխարհի ծայրն են հասել)։ Արևահատի տրեխները որ մաշվում է, նրա առջև բացվում է մի հրեղէն պալատ։ Ներս է գնում և տեսնում է այնտեղ նստած Արևամօրը, այսինքն Արեգակի մօրը, որ մի շատ սիրուն պառաւ է լինում։ Արևամայրը նրան սիրով ընդունում է, իմանում է գնալու պատճառը և թաքցնում է նրան, որ տղան՝ Արեգակը՝ չտեսնէ նրան։ Երեկոյին տղան ներս է մտնում, շատ շոգած ու քրտնած... մայրը նրան աղաչում է, որ խնայէ Արևամանուկին և ազատէ նրան մահից։ Տղան մօր խօսքը չի կոտրում. վեր է առնում մի կտոր բամբակ, իր քրտինքը սրբում է նրանով և ասում է. ահա այս է նրա դեղը. եթէ իմ քրտինքը քսեն նրա երեսին, նա կառողջանայ, բայց ո՞վ կըտանէ։ Այստեղ մայրը յայտնում է Արևահատի դալը, դուրս է բերում նրան թաքցրած տեղից։ Արեգակը նրան սիրով ընդունում է և կարճ ճանապարհ է ցոյց տալիս կրկին իր տեղը գնալու։

***

Գիւլնազ տատը, որ այս հէքիաթում Արևի համար ասում էր, որ տղայ է, նա ուրիշ անդամ ասում էր. Արեգակն ու Լուսինը քոյր ու եղբայր են։ Մօր մասին խօսք չկար։ Նա ասում էր. որովհետև Արեգակն աղջիկ էր, գիշերը վախենում էր ման գալ, իսկ ցերեկը՝ ամաչում։ Լուսինը նրան մի բուռը լիքն ասեղ տուաւ և ասաց. «Ով որ քեզ մտիկ տայ, դու այս ասեղներով կրծակծկես նրա

աչքերը։ Այնուհետև քոյրն սկսեց ցերեկը ման գալ, իսկ եղբայրը՝ գիշերը։

Գիլնազը չէր ասում, որ ցերեկի պատճառը Արեգակն է, որ առանց արեգակի ցերեկ չի լինիլ։ Ոչ. ցերեկն ինքն իր համար մի ջոկ բան է, գիշերը ջոկ։ Արեգակ լինի, չլինի, ցերեկ պիտի լինի։ Նա ասում էր. ցերեկն ու գիշերը մի ծեր մարդու ձեռքում են գտնվում։ Ծերունին նստած է մի բարձր սարի վրայ և երկու կծիկ ունի ձեռին, մինը սև և միւսն սպիտակ։ Երբ որ գլորում է սև կծիկը, աշխարհքը մթնում է, և երբ որ սպիտակն է գլորում, լուսանում է և ցերեկ դառնում։ Այդ ծերունին՝ էլ մի ուրիշ բան չունի... շարունակ սպիտակը կծկում է, սևը բաց թողնում, սևը կծկում է, սպիտակը բաց թողնում . . .

***

Գիլնազ տատիկը շատ անգամ խոր հոգոց քաշելով ասում էր.

—Էհէյ, հէյ... դուք հէնց կարծում էք, թէ մեր աշխարհքն առաջ էլ այսպէս է եղել... Ո՛չ։ Հին ժամանակները, երբ որ Աստուած մօտիկ է եղել մեզանից, Նրա ողորմութիւնն էլ անպակաս է եղել։ Ամեն ձմեռ, երկինքը ձիւնի տեղ ալիւր է եղել թափելիս, ձիւնի պէս սպիտակ, նրա պէս մաքուր։ Մարդիկ հաւաքում են եղել երկնքի ալիւրը և իրանց ամբարները լցնում այնքան, որ բաւականանար մինչև միւս ձմեռը . . .

Մէկ անգամ, երբ տատիկն արդէն սկսել էր պատմել, թէ հին ժամանակներումը մարդիկ ինչպէս են եղել ապրելիս, երեխաներից մէկը, որ գլուխը տատիկի ծնկանը դրած քնել էր, յանկարծ զարթեցաւ, և պատմութիւնը միջահատելով, հարցրեց տատիկին.

—Յետո՞յ, տատիկ, յետո՞յ . . .

—Ի՞նչ յետոյ, հոգիս, հարցրեց տատիկը . . .

—Դու չասացիր, որ երկինքն առաջ շատ մօտիկ էր մեզանից... յետոյ ինչպէս եղաւ, որ նա այսքան բարձրացաւ։

—Այնպէս եղաւ, որ երեխէրքը երբ որ սկսեցին շատ չարութիւն անել, անդադար վազվզում, թռչկոտում էին և Աստուծուն չէին թողնում հանգիստ քնել, նա էլ բարձրացրեց երկինքը, հեռացաւ, առանձնացաւ, որ երեխէրքն իր քունը չխանգարեն։

—Այդպէս չէ, տատիկ, այդպէս չէ, մէջ ընկաւ մի սրամիտ երեխայ, որ ուրիշ կերպ էր լսել այդ անցքը։

—Հապա ինչպէս է եղել, հարցրինք ամենքս միաբերան։

—Թող տատիկն ասի... Աստրծուն խռովեցնողը ոչ թէ երեխէքն են եղել, այլ մի անգէտ պառաւ է եղել, որ երեխի. . . . . :

—Այդ սուտ է, այդ սուտ է... խնդալով ընդհատեց Գիւլնազ տատը, չուզենալով՝ որ պատճառը պառաւները լինին եղած։

Այստեղ երեխէրքս պաշտպան հանդիսացանք տատիկին և բարկացանք նոր զարթած երեխայի վրայ, որ միջահատեց տատիկի պատմութիւնը։ Գիտէինք առաջուց, որ եթէ տատիկի պատմութեան թելը կտրէինք, էլ միւս անգամ նա իր ասելիքի ծայրը չէր գտնիլ, այնպէս էլ կըխափանուէր գործը։ Եւ հշմարիտ այնպէս էլ եղաւ։

Տեսնելով, որ տատիկը էլ նոր բան պատմելու տրամադրութիւն չունի, սկսեցինք խառն ի խուռն հարցեր առաջարկել։ Աղջկերքը հարցնում էին, թէ՝ այնպէս չէ՞, տատիկ, որ եթէ աղջիկը Կանաչ-Կարմրի տակովն անց կենայ, տղայ կըդառնայ. տղերքը հարցնում էին, թէ՝ այնպէս չէ՞, տատիկ, որ եթէ մէկը կարենայ իր արմունկիցը պաչել, ծիտ կըդառնայ, և ուրիշ այս տեսակ հարցումներ։ Իսկ ես էլ, որ պակաս հեքաքրքիր երեխայ չէի,

Հարցրի տատիկին, թէ՝ պապ Ուխայն իր աշակերտին ինչպէս էր աղունակ, կաչաղակ, ծիտ և ուրիշ թռչուններ շինում։

—«Ահա այսպէս». ասաց տատիկը և փոքրիկներից մէկին ծնկան վրայ կանգնեցրեց, ձեռքերից բռնեց և վեր ու վայր թափ տալով երգեց—

Ղո՛ւ—ղո՛ւ—ղո՛ւ՛ուՈ՛ւ...
Ա՛ ղու—ղո՛ւ՛ուՈ՛ւ...
Նա՛ռակ, նա՛ռակ,
Ա՛—ղո՛ւ—նակ...
Թռռռռռ....

Այս ասելուց յետոյ երեխան թռաւ գետնի վրայ կանգնեց և ծիծաղելով ասաց.—Ո՞ւր է տատիկ, ես աղունակ չդառայ . . .

—Վնաս չունի, Հոգիս, պատասխանեց տատիկը, դեռ փոքր ճնճղուկ ես, երբ որ կըմեծանաս, աղունակ կըդառնաս . . .

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի կաչաղակ շինեա... ասաց մի ուրիշը։ Տատիկը նրան էլ դրաւ իր ծընկներին և առաջուան ձևով երգեց—

Ճա՛—չա՛—չա՛՛՛ա՛...
Կա՛—չա՛—չա՛՛՛ա՛...
Ղա՛՛ռակ, ղա՛՛ռակ
Կա՛—չա՛—ղա՛՛ռակ
Թռռռռռ...

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մէկ ծիտիկ շինեա, ասաց ամենից փոքրիկը։ Տատիկը նրան էլ վեր առաւ և վեր ու վայր թռցնելով՝ երգեց—

Ծիտ եմ, ծիտ եմ, ծլվլում եմ
Ճի՛՛ի՛՛ռ, ճի՛՛ի՛՛ռ, ճի՛՛ի՛՛ռ...
Ոստոստում եմ, թռչկոտում եմ
Տի՛՛ի՛՛ռ, տի՛՛ի՛՛ռ, տի՛՛ի՛՛ռ...

Արի, թռչիկ, արի, փետրիկ,
Որ ես դառնամ փոքրիկ ծիտիկ,
Փոքրիկ ծիտիկ,
Պիծիկ միծիկ,
Թռռռռռ...

Այսպէս բոլոր երեխայքս մի-մի թռչուն դառնալով թռանք, և տատիկից խօսք առնելով, որ նա միւս անգամ կըպատմէ մեզ պապ Ուխայի հէքիաթը, գնացինք մեր ընդհատած խաղը շարունակելու . . .

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ԽԱՂ

Ա.



ՊԱՌԱԻԸ

Ցու-ջու-ջու-ջու, իմ վառիկներ,
Սիրուն ճուտեր, հաւ մարիկներ,
Ոսկեփետուր աքլարիկներ,
Եկէք կերէք ձեր հատիկներ։

ՀԱԻԵՐԸ

Բարի տիկին, տուր տուր կուտիկ,
Լիք-լիք լցուին մեր նեղ քուչիկ,
Որ քեզ ճերմակ կոլոր ձուեր,
Բարձիդ համար տանք փետուրներ։

ՊԱՌԱԻԸ

Ահան, ահան, անուշ արէք,
Վէր քաղեցէք, կուշտ-կուռ կերէք.
Ես տուն կերթամ, քչուչ արէք.
Երբ որ կանչեմ, ականջ արէք։

ՀԱԻԵՐԸ

Կուտը կերանք կը՞տ, կը՞տ, կը՞տ, կը՞տ,
Քուռնիթ ժողվենք կը՞չ, կը՞չ, կը՞չ, կը՞չ,
Հաւկիթ ածենք կը՞չ կը՞չ, կը՞չ կը՞չ
Թուխս որ նստենք կը՞ռթ, կը՞ռթ, կը՞ռթ, կը՞ռթ։

ԱՔԱՂԱՂՆԵՐ

Կուտը կերանք ծուղրուղու.
Լաւ կշտացանք ծուղրուղու
Երթանք պտղանք կուկլուկու
Ուրախ մանք գանք կուկլուկու։

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Արամ, Աշխէն, Վարդան, Խորէն,
Սանդուխտ, Զուշան, Հայկակ, Սուրէն
Գնանք տեսնենք հաւերն ուր են։

—

Տեսէք, տեսէք, չալ-չալ հաւեր
Հեռու քաշուեր, կուտեն որդեր.
Այնտեղ փոքրիկ, փամբլիկ, թրմբլիկ
Պզտիկ ճուտիկ կուտէ կուտիկ։

—

Չար փիշիկը մօտ է գալիս
Սիրուն ճագին մտիկ տալիս.
Թաթը մեկնեց
Վզից բռնեց.
Աքաղաղներ, հաւ մարիկներ
Պահպանեցէք ձեր ճուտիկներ։

ԱՔԱՂԱՂՆԵՐ

Գող փիշիկը եկել է,
Փամփլիկ ճագին բռնել է։

ՀԱՒԵՐ

Փողովուեցնք, միանանք,
Չար կատուին վրայ տանք։

ԲՈԼՈՐԸ

Տեսա՞ք, տեսա՞ք ինչ եղաւ.
Գող կատուն որ մեզ տեսաւ
Խիստ վախեցաւ ու փախաւ։
Ուրեմն ապրե՞նք միասին,
Որ մօտ չգայ թշնամին։

Բ.

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Սիրո՞ւն ձագիկ, չունե՞ս մայրիկ և կամ Հայրիկ,
Որ կրթուչես ոլոր-մոլոր մեր չորս բոլոր։

ՁԱԳԻԿ

Ուրուրն այսօր տարաւ իմ մօր։

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Ձագի՞կ, մի՛ լար, որբի՛կ մի՛ լար
Դու չես մնար անտէր անմայր։

—

Եկէ՛ք քոյրեր ու եղբայրներ,
Ընկնենք սարեր ու անտառներ.
Գնանք գտնենք խնդրենք մէկին
Որ մայր դառնայ այս խեղճ ձագին.

—

Սիրո՞ւն հաւքեր, երկնից հաւքեր,
Առէ՛ք հետ ձեր ձագին անտէր։

ԿԿՈՒ

Կո՞ւկ—կո՞ւ. կո՞ւկ—կո՞ւ . . .

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Չէ, չէ. կրկու, այլոց բընում
Զու ես դնում, մայր չես դառնում։

ԱԳՌԱԻ

Գռա՛, գռա՛, գռա՛ . . .

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Չէ, չէ, ագռա՛ւ, գող, գիշակեր,
Քեզ չենք յանձնիլ, մի՛ կռայեր։

ԿՌՈՒՆԿ

Կը՞ռ, կը՞ռ, կը՞ռ . . .

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Չէ, չէ, կրռունկ գարնանասէր,
Մեր երկիրներ կայ ցուրտ ձմեռ.

ՏԱՏՐԱԿ

Վո՛ւ, վո՛ւ, վո՛ւ . . .

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Չէ, չէ, տատրա՛կ, գիտենք լաւ ես
Ազնիւ Հաւ ես, բայց լալկան ես։

ՁԱԳԻ ՄԱՅՐԸ

Մարդն ուրուրին սպանեց,
Ինձ ճանկերից ազատեց.
Տուէք ձագս, խնդրում եմ,
Ո՞վ է գտել, փնտռում եմ։

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Ա՛ռ, ա՛ռ, մայրիկ,
Քո խեղճ ձագիկ,
Սիրուն ծրտիկ,
Որ չթռչի
Ոլոր-մոլոր
Մեր չորս բոլոր։

—

Ձագուկ, ձագուկ, ուրախ կաց,
Մօրդ գնա դրկաբաց.
Հետը թռիր, հեռացիր,
Անցած ցաւդ մոռացիր։

—

Ձագը մօրը սիրում է
Ուռանց նորան տխրում է,
Երբ որ նորան գտնում է,
Ուրախ ճրչում, ճխում է։

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Հայոց Պատմութիւնից)

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

Ուղիղ երեսուն տարի էր անցել Վարդանանց պատերազմից։

Աւարայրի ահեղ դաշտը իր օրահասական պատերազմով դեռ չէր մոռացել Հայաստանցին։ Վարդանի և նրա նիզակակիցների անունները լսվում էին և՛ գեղջուկ լեռնեցու կրակարանի մօտ, և՛ սակաւապէտ զինուորի կոշտ բնակարանում, և՛ աղնուականի շքեղ դարպասում։ Դեռ չէր դադարել սիրելիների մրմունջը, որովհետև նրանց սրտում լայն բացուած վէրքը դեռ չէր կեղև կապել, դեռ Պարսկաստանում չէր մարել բանտերի խորքում շղթայակապ ընկածների հեծեծանքը։ Բայց Հայաստանը մի նոր փորձի վրայ էր։ Առ ժամանակ Հանդար-

տած մթնոլորդը պատրաստվում էր կրկին ահեղագոչ փոթորիկներ կրկնել։

Գիշեր է։ Կաթողիկոսանիստ Դուինը ընկղմուած է խորին լռութեան մէջ։ Ճրագներն ամեն տեղ մարած են, ամայի փողոցներում ազատ տիրութիւն են անում թափառաշրջիկ շները, որոնք այստեղ այնտեղ հոտոտելով, քաղաքացիների երեկոյեան ընթրիքի մնացորդներն են որոնում պատերի տակ և աղբանոցներում։

Քնած է Դուինը։ Լուսին չկայ. փայլուն աստղերը համեստ շողշողում են մութ երկնակամարի վրայ։ Աշունը նոր է սկսուել։ Տաք օդի մէջ, դաւթում, խորդում է Ադրվշնասպ մարզպանի դրան պահապան պարսիկը։ Նրա տէրը այժմ շատ հեռու է գտնվում. նա անհոգ ընկած է. նիզակը դէմ է դրել պատին, կարճլիկ երկսայրին գոտիից կախ ընկած է մնացել։ Նա կարծես քաղցը երազի մէջ է. տեսնում է Պարսկաստանի պարզ երկինքը և այդ երկնքի տակ՝ իր անշուք բնակարանը, ուր այդ բոպէին միմեանց գրկած քնած են նրա փոքրիկ զաւակները. երրորդ տարին է որ դրանց չի տեսել հէգ զինուորը։ Քնած է և զաւակների մայրը, խրոխտ պարսկուհին. քնած է իր ամուսնու հետ ղէթ երազում խօսելու քաղցը յոյսով։ Պահապանը ժպտում է, երջանիկ է իր այդ վաղանցուկ երազով, որ մոռացնել է տուել ամեն ինչ։ Եւ ոչ ոք չի խանգարում այդ երազը։ Միայն աշնանային մեղմ քամին, որ երբեմն դուրս է թռչում տան պատի քամակից, քսվում է նրա դէմքին և խոկոյն էլի հեղիկ, լռիկ սահում, անցնում։

Գիշերային այդ պահուն քնած չէ միայն մի կին, որ միայնակ փակուած է Դուինի կենդրոնական թաղում շինած մի տան մէջ։ Ճրագի աղօտ լոյսը պատուհանի լայնութեամբ մի փայլուն շերտ է գցել բակի վրայ։ Ճրջականները լուռ են, անշարժ։ Լուռ է և ինքը, բարձրահա-

սակ, սևագանգուր կինը, որ ահա չորս ժամ շարունակ նստած է մի փոքրիկ անկողնի մօտ և ամենայն ուշադրութեամբ նայում է այնտեղ պառկած մանուկի դէմքին։ Յուսահատութիւնը հետզհետէ սաստկանում է այդ կնոջ դէմքի վրայ. երբեմն նրա կրծքից դուրս է թռչում մի հանդարտ հառաչանք։ Եւ յաճախ ձեռքը դնելով երեխայի ճակատին և շրթունքներին, էլի նայում է նրան, նայում է, չի կշտանում։

Երեխան հիւանդ է։ Նրա փափուկ դէմքի վրայ նրկատելի է օրհասի նշանը, որ կապոյտ գոյնն է համարվում։ Ընչառութիւնը կցկտուր է, շատ դանդաղ. երբեմն կրծքի միջից լսվում է մի սարսափելի խզզոց։ Քնած է երեխան թէ հոգեվարքի մէջ է։ Այդ չգիտէ մայրը և չի էլ ուզում իմանալ. նա նրան քնածի տեղ է դրել և այդ իսկ պատճառով չի համարձակվում ծածկել երեխայի փոքրիկ փափուկ թևը վերմակի տակ, վախենում է դրանով վրդովել սիրելի զաւակի քունը։

Գիշերը ծանր անցնում է. ճրագը իր բոսորային լուսով օգնում է մօրը անհերկիւղ մնալ և անքթիթ աչքերով դիտել երեխայի դէմքը։ Ճրագը նոյնպէս օգնում է մօր աւելի և աւելի յուսահատուելուն։ Մտքերը հեռացել են նրանից. մինչև անգամ աղախիններից մէկին չի կանչում, որ սփոփի իր սիրտը, որը աւելի և աւելի սեղմվում է, զգալով օրհասի ներկայութիւնը։

Ասում են, մարդուս սիրտը երբեմն և շատ հեռու տեղերում զգում է այն, ինչ որ պիտի պատահի այն մարդկանց, որոնց մասին նա մտածում է։ Այդ բոլորովին ճիշտ էր Հրահատ Կամսարականի վերաբերմամբ։ Նոյն այդ գիշերը, նոյն այդ պահուն, երբ նրա կինը այսպէս տանջվում էր, Իշխանը իր եղբօրց հետ գտնվում էր Հայոց բանակում, որ հեռաւոր Ազուանից երկրից յետ էր դառնում Գուին, և ճանապարհին վրաններ էր զարկել Ջիրակայ

դաշտում, հանգիստ առնելու համար։ Կամսարականները մենակ չէին։ Մի լայնարձակ վրանում հաւաքուած էին բանակի բոլոր նշանաւոր իշխանները։ Կազմուել էր մի դաղտնի խորհուրդ, իւրաքանչիւրն իր կարծիքն էր յայտնում։ Միայն հրահատ իշխանն էր, որ շատ տխուր էր։ Նա քաշուել էր մի անկիւն և ինքն էլ չգիտէր թէ ինչեր էր լսում։ Նրա սիրտը մի թշուառութիւն էր զգում։

Այդ տխրութիւնը նկատելով Սիւնեաց կրտսեր իշխան Բարգէնը, որ հրահատ իշխանի սրտակիցն էր, զարմացած մօտեցաւ և ձեռքը դնելով նրա ուսին, ականջում փսփսաց մի քանի քաղցր, բայց յանդիմանական խօսքեր։ Կամսարականը ընկերի այդ խօսքերի վրայ կարծես արթնանալով, վեր կացաւ, առաջ նստեց։ Այժմ նա ուշադիր էր վիճաբանութիւններին, թէև նրա դէմքը դեռ պատած էր հոգեկան անձկութեան ապաժոյժ ստուերով։

Խօսում էր մի գանդրահեր, երկարահասակ և լայնալանջ տղամարդ։

—Ասացի որ վտանգաւոր է այդ ձեռնարկութիւնը։ Պատրաստի ոյժ չկայ, իսկ մեր նախարարները դեռ շարունակում են իրանց երկդիմի դործողութիւնները. մի օր պարսից հլու ծառայ են երևում, միւս օրը իրանց շահերի ջերմ պաշտպան, անձնիշան պետեր։ Աւելի լաւ է, իմ կարծիքով, մեր բոլոր յոյսը Աստուծու վրայ դնել. նա միայն կարող է մեզ հովանաւորել։ Ես չեմ ասում թէ մեր լոյս հաւատը վտանգի մէջ չէ, բայց իմացէք որ մեր թշնամին էլ պակաս զօրեղ չէ։ Դուք կարծում էք թէ մեզ կօգնեն վրացիները կամ հոները. ո՞վ դիտէ, կօգնե՞ն արդեօք։ Տկարամիտ մարդկանց վրայ յոյս դնելուց լաւը նա կըլինէր, որ աղաչէինք Աստուծուն մեզ օգնութեան հասնել և չմոռանալ մեր սուրը նախնիքներին, որոնք արիւն թափեցին մեզ համար։

Այդ խօսքերի վրայ խորհրդականների մէջ մի շշուկ

անցաւ, մի քանիսները ծիծաղեցին, որոնց թւում և Սիւնեաց իշխան Գդիհոնը, մի հսկայատիպ մարդ, որ բոլորի մէջ վեհաղոյն էր իր խրոխտապանծ դէմքով, իր հուժկու կազմուածքով և փառաւոր զգեստով։ Նստածները իսկոյն նկատեցին, որ իշխանի ծիծաղը միւսների ծիծաղի նման չէր. նրանք վաղուց գիտէին, որ Գդիհոնը իր ծրագիրն ունի և չի հետաքրքրվում այս ժողովով, այլ նման էր երկար նստելուց շատ ձանձրացած մի մարդու. կարծես նա ամեն րոպէ հարցնում էր թէ ինչ է նշանակում այս ամենը և երբ կըվերջանայ։

Ներսէհ Կամսարականը, Հրահատի մեծ եղբայրը, որ խորը մտածում էր իր լսածների վրայ, սկսեց խօսել. իր թանձր ու ախորժելի ձայնով։

—Լաւ ես ասում, Վահան իշխան, ասաց նա,—առանց Աստուծու ունայն է մարդկային յոյսը. և մենք նրա օգնութեամբ միայն ուզում ենք գործ սկսել։ Յիշիր, որ Պերոզը յաղթուած փախաւ Պարսկաստան. վրացիները և հոները ատելութիւն են որոճում դէպի պարսիկները։ Այս բարեպատեհ առիթը եթէ ձեռքից թողնենք և ուրանանք մեր եկեղեցին լոկ աշխարհային փառքի համար, վատի անուն պիտի ժառանգենք յաւիտեան։ Ինքը Տէրը տեսնում է, որ մենք անձնական փառք չենք որոնում, այլ մեր Հայրենի եկեղեցու պաշտպանութիւնն ենք ձեռք առնում։ Մենք չենք ծրագրում մի նոր բան, որին սովոր չլինի Հայը։ Արդէն քո հօրեղբօր օրինակը ամենքիս աչքի առաջ է։

—Հայրենիքը վտանգի մէջ է, շարունակեց Հրահատը իր եղբօր սկսածը։—Պարսկական խորամանկութիւնը ուզում է մեզ վերջին հարուածը հասցնել։ Աւարայրի փորձը մոխրապաշտներին խելքի չբերեց, այլ ընդհակառակն այժմ այնպիսի մեքենաներ են սարքել մեր դէմ, որ մենք պիտի ծանր խորհենք մեր դիրքը, մեր անելիքը։ Ոչ վր-

բացիներն են մեր յոյսը, ոչ հոները։ Ոչ։ Մենք յոյս ենք դրել մեր մահուան վրայ. այո, մեր արիւնով միայն վրստահ ենք, որ այլ ևս չենք տեսնիլ մեր սուրբ եկեղեցին արհամարհուած։

Գանդրահեր տղամարդը, որ Մամիկոնեան Վահանն էր, մեծ Վարդանի եղբօր՝ Համայակի որդին, խորին մըտածութեան մէջ ընկաւ Հրահատի վերջին խօսքերը լսելուց։ Մի ինչ որ բան նրան տանջում էր։ Թաւ յօնքերով պատած ահեղ աչքերը յառեցան դետնին, ճակատի վրայ կուտուեցան կնճիռները։ Նրա սիրտը աւելի ևս բորբոքեց Բաբգէն Սիւնին, որ խիստ կծու ձայնով խօսեց Հրահատից յետոյ։

— Անվճռականութիւնն անարի վախկոտութեան նշան է։ Այս աղատաղուններն ուխտում են մեռնել կրօնի համար և այդ ուխտը չընդունողը պարզ վկայում է, որ. մարմնաւոր փառքի գերի է։ Այդ փառքը ատողներս մի կողմ կանգնենք և վճռենք մեր անելիքը։

Վահանը չկարողացաւ լռել։

— Իշխան Բաբգէն, ասաց նա անվրդով, հանդարտ ձայնով, գովում եմ երիտասարդական եռանդդ, բայց այդպէս սուր կերպով վճիռ դնելը քիչ ընդդէմ է խորիմաստ կշռադատութեան կանոնին։ Արդէն ձեզ ամենիդ յայտնի է, թէ ինչպէս ես կուրացած աշխահի փառքից, մի քանի սինլքոր զրպարտիչների լեզուն կապելու համար ուրացայ իմ լոյս հաւատը և երկրպագութիւն արի արեգակին ու կրակին և դրա համար պարգևներ ստացայ Պերոզի արքունիքից։ Բայց շատ չտևեց իմ մտաւոր կուրութիւնը. մեր նախնիքների պաշտած Աստուածը բաց արաւ միտքս, և ես մի կարճ միջոցում հասկացայ թէ ինչ քստմնելի գործ եմ արել մի անցաւոր սին փառասիրութեան համար։ Վկայ թող լինի իմ եղբայր Վասակը, որ այստեղ ձեզ մօտ է, թէ քանի քանի անգամ լռելեայն

արտասունք եմ չափել անիրաւութեանս համար։ Այժմ, այս եղբայրական միաբանութեան խօսքերը լսելով, սիրտս ուժգին ցաւում է։ Ես համաձայն եմ, որ պիտի մեռնինք մեր հաւատի համար, և ամենից առաջ ես պիտի մեռնիմ, որ արիւնովս ջնջեմ անուանս վրայ դրած արատը։ Գնանք ուրեմն, գնանք մեռնինք։

Ժողովը ուրախութեամբ ընդունեց Մամիկոնեանի այդ համաձայնութիւնը. իսկ երբ Վասակ Մամիկոնեանը ոգեւորուած ցանկացաւ միանալ նրանց հետ, կրտսեր Կամսարականը չվարողացաւ արտասունքը պահել։ Իսկոյն Վահանին ընտրեցին սպարապետ բոլոր զօրքերի վրայ, որովհետև բոլորն էլ ականատես եղած էին նրա քաջագործութիւններին, բոլորն էլ նրան դեռ պատանեկութիւնից ճանաչում էին իբրև անվախ որսորդ և հիանալի զինաշարժ։

Հայոց զօրքերին ուղեկցում էր Բջնեցի Աթիկ քահանան, Ղևոնդեանց արժանի յաջորդը. նա իսկոյն հանեց Աւետարանը, որի վրայ բոլոր ներկայ եղողները միաբանութեան ուխտ կապեցին և երդմամբ հաստատեցին այդ ուխտը։

Յետոյ իշխանները եղբայրաբար համբուրվեցան միմեանց հետ և ժողովը ցրիւ եկաւ։

Գիշերուայ կէսն էր, երբ ամեն մէկը իր վրանն էր որոնում։ Բայց երկու մարդիկ հեռացան հայոց բանակից և շտապով դիմեցին դէպի մի քանի վրաններ, որոնք նշմարելի էին դաշտի տարածութեան վրայ, քիչ հեռու։ Այնտեղ էր Ատրվշնասպ մարզպանը, որ հայ զօրքի հետ հայաստան էր վերադառնում։ Գնացողներին էին վեհապանծ Գրիգոն Սիւնին և Վարազշապուհ Ամատունին, երկու իշխաններ, որոնց սիրտը լցուած էր կոյր ատելութեամբ և նախանձով։ Նրանք այլ ևս չվերադարձան հայոց բանակը։

Ա. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ

(Կըշարունակուի)

ՍԵԻԱՆԱՅ ԾՈՎԱԿԸ

ԱՌԱՒՕՏ

Լիշերուայ մռայլը անապակ ջրերից
Մառախուղի պէս վերնում էր յուշիկ.
Ծովակն արթնացած իւր քաղցր քնից
Երկնագոյն աչեր դարձնում էր երկինք:

Եւ հետզհետէ ծովը բացվում էր,
Մերկացնում բոլոր իւր շքեղութիւն,
Կարծես անկողնից կոյսը ելնում էր,
Իւր հրաշալիքներ նազելով ցուցնում:

Եւ վերջին անգամ փայլեց Լուսաբեր,
Ասաց ծովակին համբ «մնաս բարեաւ»
Եւ վերջին անգամ նորա թոյլ ստուեր
Կապուտակ ջրերից էլ անյայտացաւ:

Փարում էր ծովին, օրօրում հովը
Եւ գուրգուրելով մի բան շշնչում,—
Կարծես վաղ զարթող կայտառ մանկանը
Սիրող մայրը դեռ քնացնել էր ուզում։

Եւ կաթնակապոյտ տարածութեան մէջ
Հեռուում երկինքը ոսկեզօծուեցաւ,
Նորա տակ մեղմով ծովակը վայլեց,
Արանուշակների խմբով լցուեցաւ։

Այնտեղ՝ կարծես թէ դուրս եկած ծովից
Վարդասփիւռ լերանց շարքեր երևցան
Եւ երկու լերան բացուածքի միջից
Դուրս ցայտեց մի վառ կրակ կիսաշրջան։

Գ. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈՒՍ

Կոմս. Լ. Ն. Տոլստոյի „Ясная Поляна“-ից

2.

Երբ Չեխիայում իմացան, որ Հուս բանտարկուած էր, 270 ասպետ դանդատ տուին կայսրին և գրեցին, որ Հուս արձակուի և ժողովի առջև արդարանալու իրաւունք ստանայ: «Աստուծուց յետոյ՝ ամենից առաւել քեզ և կայսերական իսկքիդ ենք ապաւինած», գրում էին նրանք: Կայսրը պատասխանեց, թէ պապի և կառդինալների վրայ իշխանութիւն չունի. իսկ կառդինալներն ասել են, որ Հուս չէ թէ լոկ հերետիկոս է, այլ հերետիկոսապետ, վասնզի չնայելով որ արդէն Հինդ տարիից 'ի վեր բանադրուած է, դեռ մինչև այժմ չէ գնացել Հռոմ՝ ներկայանալու պապի դատաստանին, ինչպէս հրամայած էր նրան սուրբ Հայրը:

Ոչ ոք իրաւունք չունէր Հուսին տեսնելու. միայն Խլում ասպետը, այն էլ սահմանուած ժամերին, կարող էր գնալ և վանդակի ետևից նրա հետ խօսակցել: Երբ այս էլ արգելեցին, Հուս սկսաւ թղթակցել Խլումի հետ և նրա միջնորդութեամբ նամակներ առաքել իր հետաւոր հայրենակիցներին: Այս նամակների մէջ նա դանդատվում էր, թէ նրան նեղում են, սովով տանջում են, թէ կայսրն իր խոստմունքն ուրացել է, թէ նրան դերի են պահում: Նրա դանդատների լուրն իշխանութեան որ հասաւ, պաշտօնեաները հրաման ստացան բռնել և թաքցնել Հուսի նամակները: Բայց բանտի պահապաններն այնքան սիրել էին Հուսին, որ երբեմն անց էին կացնում

նրա նամակները և ներս թողնում բարեկամներին։ Չեխ բարեկամները մի երկու անգամ այցելութիւն արին նրան բանտի մէջ։ Հուս շատ ուրախացաւ նրանց տեսնելով։ Բարեկամները խոստացան մի Աստուածաշունչ հասցնել նրան Չեխիայից. նա երկար սպասում էր այս գրքին և չէր կարողանում հանգստանալ, մինչև որ գիրքը չեկաւ։ «Սրանով մեծ լաւութիւն արին ինձ», գրում էր Հուս, «Ս. գիրքը մխիթարիչ և օգնական կըդառնայ ինձ այս գերութեանս մէջ»։

Երկու ամիս անցնելուց յետոյ իշխաններն և աղնուականները, աղքատներն և մեծաւորները երկրորդ աղերսագիր մատուցին կայսրին։ «Զարմանում ենք քեզ», գրում էին նրանք. «անպարտ և արդար մարդուն դատաստանի են կանչում, որպէս զի կարողանայ ինքն իրան և բոլոր չեխ ազգին պաշտպան կանգնել, և յանկարծ, առանց այլևայլի և քո խոստման հակառակ, պապը բարեհաճում է ձգել նրան բանտի մէջ. այսուհետև ո՞ւր կըմնայ արդարութիւնը»։

Կայսրը խնդրին ականջ դնելու փոխարէն՝ սկսաւ առաւել ևս խիստ վարուել Հուսի հետ, և նրա վրայ առաւել արթուն հսկողութիւն ունենալու համար՝ յանձնեց նրան Կոնստանցի եպիսկոպոսին, որ Հուսի ոխերիմ թշնամին էր. եպիսկոպոսն էլ, վախենալով, որ Հուսի բարեկամները նրան վանական բանտից չազատեն, հրամայեց տանել նրան մի առաւել հեռու տեղ։ Գիշերով եկան 170 զինուորներ, բռնեցին Հուսին և տարին ձգեցին մի աշտարակի մէջ։ Աշտարակը կանգնած է մի կղզու վրայ, կղզու շուրջն էլ ջուր է։ Պահապաններին հրամայուած էր խիստ հսկել Հուսի վրայ։ Յերեկը նրա ոտքերը շղթաներով կապում էին, իսկ գիշերը—ոտքերն էլ, ձեռքերն էլ պրկոցներով կաշկանդում էին։ Երկար ժամանակ մաշուեցաւ այնտեղ Հուս։ Ջատիկն արգէն մօտենում էր. նը-

բան սոված էին պահում, մինչև անգամ սուրը հաղորդութիւն չէին տալիս։ Այս տանջանքների ժամանակ նա գրեց Պրագ, իր մտերիմներին. «Ուրախ եղէք ամենքդ, պատրաստուեցէք Զատկից առաջ Քրիստոսի մարմինը ճաշակելու. ես զրկուած եմ հաղորդութիւնից, քանի որ այսպէս է Տիրոջ կամքը։ Պատահել է, որ շատ ուլբեր և առաքեալներ մնացել են անհաղորդ, բանտի մէջ փակուած լինելով»։

Մի օր եկեղեցական և աշխարհական իշխանները հաւաքուեցան քաղաքային խորհրդարանի մէջ և հրամայեցին, որ Հուսն էլ այնտեղ բերուի։ Զգուած և զուարթ էին ամենքը, ասես թէ մի տօն լինէր. իսկ Հուս կանգնած էր նրանց առջև հիւանդ, դունատ, նիհար և բերնից արիւն թքնելով։ Հէնց որ նա կամեցաւ մի խօսք ասել, բոլորն էլ աղմկուեցան, տրոփեցին, կանչվրտեցին. նա խոնարհեց գլուխն և լուռ կեցաւ։

Այն ժամանակ նրան ասացին. «Ի՞նչ ես լռում. երբեմն թէ խիղճդ տանջում է քեզ, ով դու հերետիկոս»։ Իսկ նա հանդարտ կանգնած՝ չգիտէր ինչ ասէր, մինչդեռ նրա շուրջը բազմութիւնն ալեկոծվում էր, մոլեգնում և որոտում։

Այս վայրագ գազանների ժողով է, այլ ոչ թէ գիտնական մարդիկների», ասաց նրա բարեկամներից մինը. իսկ ինքն Հուս բարձր ձայնով աղաղակեց. «Արդարև կարծում էի, թէ ժողովի մէջ գործերն առաւել խոհեմ և մարդավայել կերպով են քննվում»։

Այն ժամանակ աւագ կառդինալը գոռաց. «Ի՞նչպէս յանդգնեցար այդպէս բան ասել. կարծեմ, դու ուրիշ կերպ էիր խօսում աշտարակի մէջ»։—Հուս ասաց. «Աշտարակի մէջ ոչ ոք չէր կանչում վրաս. իսկ այժմ ամենքդ էլ գոռում էք»։

Դրանով վերջացաւ առաջին հարցափորձը։ Հուսին

նորից բանտ տարին։ Ճանապարհի վրայ ժողովուրդն և մտերիմները մօտենում էին նրան և լաց էին լինում. նա օրհնում էր ամենքին և ասում. «Ես չեմ ուրանալ ինքս ինձ, միամիտ կացէք իմ մասին»։

Երկրորդ անգամ դատաստանի կանչեցին նրան։ Այդ միջոցին արեգակի խաւարումն պատահեցաւ. ցերեկը գիշեր դարձաւ։ Խորհրդարանի մէջ հաւաքուած էր ահագին բազմութիւն, բայց ոչ ոք ոչինչ չէր տեսնում։ Պէտք եղաւ ջահերը վառել. երբ լուսացաւ, հարցմունք արին Հուսին, թէ «ընդունո՞ւմ ես Վիկլեֆի ուսմունքը»։—Հուս պատասխանեց. «Ընդունում եմ նրա ուսման այն մասերն, որոնք հակառակ չեն Սուրբ Գրքին և Քրիստոսի խօսքերին»։

Կայսրը լսեց նրան և ասաց. «Ի՞նչ հարկաւորութիւն կայ երկար խօսելու. հնազանդի՛ր ժողովին, և լաւ կանես»։—«Կայսրն էլ ինձանից հրաժարվում է», մտածեց Հուս. «Ուրեմն բանս այժմ կորած է»։ Ժողովի մէջ այս անգամ էլ բոլորեքեան կանչվռտում էին, ինչպէս և առաջ։ «Կարծում էի», գրում էր Հուս իր բարեկամներին, «թէ ժողովի մէջ և մանաւանդ կայսրի ներկայութեամբ գործերն առաւել վայելուչ կերպով առաջ կըտարուին, բայց ամենքը զոռում էին և ինձ Հայհոյում, ինչպէս որ հրէաները՝ Քրիստոսին»։

Նրան կանչեցին երրորդ հարցափորձի։ Եպիսկոպոսներն ասացին. «Դու ուսուցանում ես, արևելեան դաւանութեան համեմատ, թէ հաղորդը երկու տեսակով պիտի լինի՝ մարմնոյ և արեան Քրիստոսի. մինչդեռ մեր հռոմէական եկեղեցին հաղորդը տալիս է միայն մի տեսակով, այսինքն մարմնոյն Քրիստոսի։ Ո՞վ տուաւ քեզ իրաւունք մեր դաւանութեան դէմ քարոզելու»։

Հուս պատասխանեց. «Աշխարհականների հաղորդութիւնը ընդ տեսակով մարմնոյ և արեան Քրիստոսի սահմանուած է նոյն ինքն Յիսուս Քրիստոսից և առաքեալ-

ներից և համաձայն է Սուրբ Գրքին։ Ինձ ի՞նչ փոյթ, որ դա հռոմէական սովորութեան հակառակ է, քանի որ մենք պարտական ենք հետևել ոչ թէ սովորութեան, այլ Քրիստոսի օրինակին»։

«Պարձեալ ասում ես», շարունակեցին եպիսկոպոսները, Հուսին դառնալով, «որ եթէ մի պապ, կառդինալ կամ եպիսկոպոս մի մահացու մեղք գործած լինի, այն ժամանակ նրանք դադարում են պապ, կառդինալ կամ եպիսկոպոս լինելուց. քարոզե՞լ ես այդ»։—«Այո՛, քարոզել եմ»։—Արդ, եթէ թագաւորն էլ մի այդպիսի մեղք գործած լինի, նա՞ էլ ուրեմն թագաւոր լինելուց պիտի դադարէ»։ Հուս մտածեց փոքր ինչ և ասաց. «Այս, թագաւորն էլ պիտի զրկուի թագից»։

Այն ժամանակ ձայն բարձրացրին. «Կանչեցէ՛ք կայսրին, կանչեցէ՛ք կայսրին. թող դայ լսէ, թէ ինչ՞ր է քարոզում այս հերետիկոսը»։

Սիգիզմունդ կայսրը նստաւ դահի վրայ։—«Կրկնե՛ր խօսքերդ», հրամայեցին Հուսին։ Հուս կրկնեց։ Կայսրը չվիրաւորուեցաւ, այլ ասաց. «Արդ չկայ, որ անմեղ լինի»։ Աղաղակներն և հայհոյանքները Հուսի դէմ չեն դադարում։ Կառդինալներն և կայսրը պահանջում էին նրանից հնազանդիլ ժողովի վճռին։ «Այն ժամանակ կըհնազանդիմ ժողովին», ասաց Հուս, «երբ Սուրբ Գրքով ապացուցանէ՛ք, որ ես սխալվում եմ կամ սուտ եմ ասում. եթէ ոչ՝ խիղճս չի ներիլ ինձ հնազանդելու»։

Նորից բանտ տարին Հուսին։ Խլում ասպետը նրա մօտից անցնելիս աչը սեղմեց։ «Միայն Խլում ասպետը չամաչեց ձեռք մեկնելու ինձ, մերժուած հերետիկոսիս. ոհ, ի՞նչպէս քաղցր երևեցաւ ինձ այդ», գրում էր Հուս բանտից իր հայրենակիցներին։

Հուսին որ հեռացրին, Սիգիզմունդ կայսրը ասաց. «Ամեն բանից երևում է, որ Հուս յանցաւոր է. եթէ շա-

ըունակէ յամառիլ իր աղանդի մէջ, կարծում եմ թէ պէտք կըլինի պատուհասել նրան, խարոյկի վրայ այրելով»։

Այս դատավճիռը Հուս իմացաւ բանտի մէջ և ասաց. «Կարծում էի, թէ Սիգիզմունդ կայսրը, ինձ ապահովագիր տալով, ինքն էլ հաւատում էր Աստուծոյ, հաւատում էր սուրբ ճշմարտութեան և իր արքայական խօսքին. տեսնում եմ, որ այդ ունայն խօսք էր—նա թշնամիներից առաջ մահուան դատապարտեց ինձ»։

Դատավճիռը հաստատուելուց յետոյ ժողովը ցրուեցաւ։ Ամենքը ուրախ և զուարթ էին, ասես թէ մի լաւ բան արած լինէին։—Եթէ մահը անխուսափելի է», մրտածում էր Հուս, «ես նրան իբրև մի ցանկալի նուէր կընդունեմ. մեռնելով իմ ուսմունքը չի կորչիլ, այլ առաւել ևս կըփայլի։ Աստուած դեռ կարող է փրկել ինձ. բայց լաւ է՝ առաջուց պատրաստուիմ»։ Եւ սկսաւ աղօթք անել, խոստովանուեցաւ և նամակներ գրեց իր հեռաւոր ընկերներին։

Դատավճռից յետոյ Հուս դարձեալ չորս շաբաթ բանտի մէջ մնաց։ Նրա մօտ անդադար մարդիկ էին դալիս յորդորելու, որ իր ուսմունքից հրաժարուի։ «Լաւ է որ վզից երկանաքար կապեն և ծովի անդունդի մէջ խեղտեն, քան թէ ուսմունքից հրաժարուիմ», ասաց նա։ «Ես հաստատ ապաւինած եմ Ամենակալ Տիրոջս և հաւատացած եմ, որ իմ քարոզներից և ոչ մինը չէ հակառակ ոչ Քրիստոսի օրէնքին, ոչ էլ եկեղեցւոյ սուրբ Հայրերի վարդապետութեանը»։

Այնուհետև Հուս բոլոր երկրային հոգսերը թողնելով, սկսաւ երկնայինների վրայ մտածել և մահուան պատրաստութիւն տեսնել։ Նա ասում էր. «Երանի է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ։ Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս, զի այսպէս հա-

լածեցին զմարդարէսն որք յառաջ քան զձեզ էին»: Մաղ. Ե.

Կայսրն և ժողովի բոլոր անդամները վերստին մի անդամ Հաւաքուեցան մայր եկեղեցւոյ մէջ: Կայսրը կանգնած էր թագով և կայսերական պերճ զգեստներ հագած. նրա շուրջը գտնվում էին իշխաններն և եկեղեցական բարձր պաշտօնեաները: Ժամի մէջ պատարագ էր մատուցվում: Հուս չոքած էր նախագաւթում, դրան մօտ. նրան արգելուած էր ներս մտնել, որպէս զի Հերետիկոսի ներկայութեամբ տաճարը չպղծուէր: Մինչ պահապան զինուորները կանգնած էին նրա կողքին, նա աղօթում էր թշնամիների համար:

Եպիսկոպոսն ասաց. «Ո՞վ կայսր. Աստուած քեզ պարգևել է իշխանութիւն, որ դու սուրը և Աստուծոյ Հաճելի գործեր կատարես. Ի՞նչ է դարձուր ուրեմն այս կամակոր Հերետիկոսին, որ իր ժանտախտն ամեն երկիրների մէջ տարածել է, և յաւիտեան փառաւորուած կըլինի անունդ»:

Քարոզից յետոյ Հուսին տարին եկեղեցի, Հրամայեցին որ բեմի վրայ բարձրանայ ամենքին տեսանելի լինելու համար, և սկսան կարդալ նրա կարգընկէցութեան դատավճիռը: Այդ միջոցին Հուս ասաց. «Աղաչում եմ ձեզ, թոյլ տուէք ինձ մի խօսք ասել, միայն մի խօսք, որ չկարծուի, թէ ես մի աղանդ եմ Հնարել. այնուհետև վարուեցէք ինձ Հետ, ինչպէս որ կամենաք»: Սակայն նրան ականջ դնող չեղաւ: Նա ծունր կրկնեց և ձեռքերը բարձրացնելով, ասաց. «Ների՞ր սրանց, Աստուած իմ. Դու գիտես, որ զուր են ամբաստանում ինձ»:

Ապա թէ սկսուեցաւ կարգընկէցութիւնը: Հուսին Հագցրին քահանայական զգեստ, ձեռքը դրին սուրը սկին, և եպիսկոպոսներն աղաղակեցին. «Ուրացի՞ր, ուրացի՞ր»: Հուս, դառնալով ժողովրդին, ասաց. «Այս եպիսկոպոսները պահանջում են, որ Հրաժարուիմ. բայց ո՞չ, ես չեմ կարող

սրտիս վկայութեան դէմ խօսիլ և Քրիստոսի Հաւատն անարգել։ Եթէ ես ուրանամ, ինչ աչքով կրնայէ վրաս իմ ազգը։ Ազգիս փրկութիւնն առաւել թանդ է ինձ, քան թէ քայքայուն կեանքիս փրկութիւնը»։

Այս որ ասաց, նրան բեմից վայր քաշեցին, մասունքներով սկին ձեռքից խլեցին, քահանայական զգեստը հանեցին և եպիսկոպոսները կանչեցին—«Անաթէմա»։ Երբ նրան խուզելու վրայ էին, վէճ ընկաւ վարդապետների մէջ, թէ արդեօք ածելիով պէտք էր կտրել նրա մազերը թէ մկրատով։ Հուս ասաց. «Ո՞վ կայսր, հաշտեցուր սրբանց, որովհետև չգիտեն, թէ ինչպէս նախատեն իմ անձը»։

Մկրատով կտրեցին մազերը. յետոյ գլխին հագցրին մի արշինաչափ թղթէ գտակ, որի վրայ նկարուած էր հերետիկոսի հոգին ճիրաններով յօշատող մի սատանայ և գրուած էր—հերետիկոսապետ։ Իսկ Հուս ասաց. «Աստուած փշեայ պսակ հագաւ ինձ համար. նրա սիրոյն ես ուրախութեամբ հագնում եմ այս նախատանաց գլխարկը»։ Յետոյ եպիսկոպոսներից մին ասաց Հուսին. «Այսուհետև եկեղեցին քեզ չէ ճանաչում և յանձնում է մարմինդ աշխարհական դատաստանին, իսկ հոգիդ—սատանային»։—«Իսկ ես յանձնում եմ հոգիս իմ բարեգութ Աստուծուն», ասաց Հուս։

Հուսին տարին կայսրի մօտ. կայսրը նշան արաւ իր տեղակալին. տեղակալը բռնեց Հուսին և դահիճներին մատնեց։ Դահիճները թրևեցին նրան դէպի վիճակաւոր արքեպիսկոպոսի բակը, որ նա այն տեղ իր յատուկ աչքերով տեսնէ իր գրքերի այրուիլը։ Յետոյ տարին նրան պատուհասելու։

Բազմութիւնը ետևից վազում էր, բոլոր փողոցները ժողովրդով լցուած էին, ամեն մարդ ուզում էր տեսնել Հուսին. ոչ ոք չէր խօսում, լուռ էին ամենքը, ասես թէ մի մեռել էին տանում։

«Մի՛ հաւատաք, ինչ որ ասում են իմ մասին չար մարդիկ», կրկնում էր Հուս. «Միշտ Աստուածային պատուիրանների համեմատ եմ ուսուցել, ճշմարտութիւն եմ քարոզել. աղօթք արէք իմ մասին, ես մեռնում եմ անպարտ»։

Ժողովուրդը Հուսի ետևից վազելով ասում էր. «Զգիտենք, ինչ է սրա յանցանքը. աղօթքին և խօսքին որ նայես, առաքինի է բոլորովին»։

Հուսին բերին պատուհասի տեղը. նա ծունր չոքեց և ասաց. «Աստուած իմ, 'ի ձեռս քոյ աւանդեմ զհոգի իմ»։ Երբ նրա գլխարկը վայր ընկաւ, դահիճը վերցրեց կանչելով. «Գնա դու էլ այրուիր դժոխքում տիրոջդ հետ, որին ծառայում էիր», և նորից հագցրեց գլխարկը Հուսի գլխին։

Հրամայեցին, որ Հուս ոտքի կանգնի. նա վեր կացաւ և ասաց. «Սուրբ Աւետարանի համար սիրով կըմեռնիմ. Տէր իմ, ներիր թշնամիներիս»։

Բազմութեան մէջ ասում էին. «Առաջ չգիտէինք, թէ ինչ էր քարոզում այս մարդը. այժմ տեսնում ենք, որ սա իրաւ մի սուրբ նահատակ է»։

Հուս կամենում էր մի բան ասել ժողովրդին, բայց թոյլ չտուին։ Նա կարացաւ միայն բարև մնա անել իր մտերիմների հետ։ Այնուհետև դահիճները նրան վերցրին, չուաններով մի սիւնի կապեցին և վիզը կուպր քսած շղթաներով պրկեցին։

Նա ասում էր. «Փրկիչն իմ Քրիստոս և՛ս առաւել ամուր բևեռուեցաւ խաչի վրայ իմ մեղքերիս համար. ես եղկելիս ի՞նչպէս թոյլ չտամ, որ ինձ այս չուաններով կապեն»։ Նա կանգնած էր երեսով դէպի արևելք. բայց յետոյ շրջեցին դէպի արևմուտք, որպէս զի հերետիկոսն արևի ծագման կողմը նայել չկարողանայ։ Յետոյ մարմինը յարդով և փայտերով պատեցին, ձեռքերն էլ քամակի վրայ պրկեցին։

Այն ժամանակ կայսրի դեսպանը դարձեալ մի անգամ ասաց. «Կրհրաժարուիս, թէ չէ»։—«Չեմ հրաժարուիլ», պատասխանեց Հուս։

Խարոյկը վառեցին։ Խարոյկի վրայից բոցերը դէպի երկինք սլացան և ասես թէ հազարաւոր հրեղէն օձեր Հուսի մարմինը պատեցին։ Ծուխն երկինք բարձրացաւ. փայտերը ճարճատեցին։ Իսկ Հուս երգում էր. «Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդի. ողորմիր ինձ բազմամեղիս, զբ-թա՛ ինձ, Աստուած իմ»։ Ծուխից շնչասպառ լինելով՝ նա լռեց. յետոյ նորից երգեց. «Ողորմիր ինձ, Աստուած, զթա՛ բազմամեղիս»։ Բայց երբ քամին երրորդ անգամ հուր ու ծուխ շնչեց նրա դէմքին, նա լռեց—միայն թէ շրթունքը դեռ շարժում էին, ասես թէ աղօթք մրմնջելով։

Փայտերը որ այրուեցան, Հուսն արդէն չկար, այլ միայն նրա խանձուած մարմինն էր մնացել սիւնի վրայ։ Դահիճները սիւնը տապալեցին և մարմնի հետ միասին նորից այրեցին։ Գլուխն և ոսկորները ջախջախեցին, սիրտը փայտի վրայ անցկացրին և կրակի վրայ խորովեցին. և որպէս զի հերետիկոսի փոշին անգամ չմնայ, հաւաքեցին նրա աճիւնն և Ռէնոս գետի մէջ թափեցին։ Հուսի ընկերները մի բուռն հող վերցրին այն տեղից և տարին իրանց հայրենիքը—Չեխիա։

Այդ իսկ տեղի վրայ դրուած է այժմ մի մեծ վէմ. վէմը շրջապատուած է երկաթեայ վանդակով և բոլորովին մամռոտած է։ Այցելուն կարդում է վէմի վրայ «6 Յուլիսի 1415 ամի»—Հուսի մահուան օրը։

Չեխերն իւրաքանչիւր տարի Յուլիսի 6-ին հաւաքվում են այն տեղ և հոգեհանգիստ են կատարում Յովհաննէս Հուսի՝ իրանց նախկին վարժապետի և քարոզչի համար։

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԹԻԹԵՌՆԻԿԻՆ ԱՅԴ ՁՐԱԳԻ

Թիթեռը սիրուն խաւար դիշերին
Սիրուն ճրագի լուսովը սպշած՝
Վերջին հրաժեշտ տալով դաշտերին,
Ճրագի կայծովն է սիրահարուած։

Թողնում է ծաղիկ, դաշտ, արօտ դալար,
Թողնում է կոկոն, տերև ու ոստիկ.
Ճրագի բոցին նա խիստ սիրահար՝
Թռչում է գալիս, շարժելով թևիկ։

Բայց ա՜խ, խաբուած է իմ սիրուն թիթեռ.
Ճրագի լոյսը, կայծերն ու բոցը
Չեն թիթեռնիկի համար կենսաբեր,
Մահն է այդ լոյսի մէջ իւր բաժինը։

Ահա՜ թրռաւ. ահա՜ նա եկաւ,
Ճրագի շուրջն է նա ցընծում, պարում.
Աչ, ձախ, ցած ու բարձր առնում է կաքաւ.
Ճրագի սիրուց նա չէ կըշտանում։

Թևիկն է խրփում ճրագի լուսին,
Ոտիկն է շրփում նորա ջերմ բոցին.
Համբոյր է տալիս նորա կայծերին,
Կարծում է իւրն է սէրը ճրագին։

Թևիկն է այրում, տոտիկն է խարշում,
Սիրուն իմ թիթեռն շրշմում է, ընկնում.
Եւ կամ ճրագի բոցերի միջին
Հրաժեշտ է տալիս օրական կեանքին։

—

Խե՜ղճ իմ թիթեռնիկ, ինչո՞ւ դու թողիր
Սարերն ու ձորեր, դաշտ ու անտառներ.
Ինչո՞ւ հեռացար և շուտ ճրագեցիր
Ծառ, ճիւղ ու տերև, ծաղիկ, արօտներ։

Կարծեցիր ճրագը սէրըդ կընդունէ՞,
Եւ ինչպէս ծառը, ծաղիկն ու արօտ՝
Սէրըդ կըգրկէ՞, քեզ կըփայփայէ՞,
Ո՛չ, նա քեզ համար՝ անլոյս և աղօտ։

Սիրէ՞ր դու ճրագ, սիրէ՞ր լոյս ու կայծ՝
Որ պարգևել է քեզ երկնից Աստուած.
Շար մարդկանց ձեռքով վառած ճրագը
Է կեանքիդ միակ օրհասն ու մահը.

Թրռի՞ր դու հեռու
Եւ միշտ երկնաչու.
Քեզ ծառ ու ծաղիկ,
Քեզ դաշտ, արօտիկ.
Քեզ արև պայծառ
Է միշտ կենարար.
Վերևը երկինք,
Ներքևը գետինք՝
Նոցա սրտին մէջ
Առ քո ելևէջ.
Ահա՛ ուր քո կեանք,
Ահա՛ ուր փրրկանք։

ԸՆԾԱՑԱՑԻ

ԱԶՆԻՒ ԲՈՒՍՏ

Արդուս պիտոյքներին օգտակար կենդանիների շարքում նշանաւոր է ազնիւ բուստը (մարջանը)։ Դուցէ շատերը զարմանան լսելով որ մենք բուստը կենդանի ենք անուանում, որովհետև մինչև այժմ նա յայտնի էր իբրև քար, որից զանազան զարդեր են պատրաստում։ Թող չզարմանան։ Այն բուստը, որից զանազան զարդեր են շինում ամբողջապէս կենդանին չէ, այլ նրա մի մասն է։

Տեսնենք թէ այդ ինչ տեսակ կենդանի է, որ տալիս է մեզ ազնիւ բուստ, ինչպէս և որտեղ է ապրում և ինչպէս են ձեռք բերվում վաճառելու համար։

Ազնիւ բուստը ապրում է ծովի մէջ և այն մարդիկը, որոնք լաւ ճանաչում են կենդանիներին, երբէք բուստը կենդանի չեն համարել ոչ այն ժամանակ, երբ նա չոր դրութեան մէջ էր և ոչ էլ նոյն իսկ ջրից հանելու ժամանակ։ Արդարև բուստի վրայ նայելիս. հէնց այն րոպէին, երբ նրան ծովից ցանցով դուրս են քաշել, դժուար է նրան կենդանի համարել։ Նա վերևից նման է փափուկ ճիւղեր ունեցող ծառի, որ համեմատաբար բաւական մեծ ուռուցքներով է ծածկուած։ Ջրից նոր հանած բուստի ծառը փափուկ է երևում, բայց նա փափուկ է միմիայն վերևից, որովհետև եթէ մի

վոքը եղունգով քերենք այդ փափուկ տեսք ունեցող ծառը, կըհասնենք ծառի պինդ մասին, որը ուրիշ բան չէ եթէ ոչ բուստի քարանիւթ առանցքը որից՝ տաշելով և կոկելով՝ շինում են դանազան իրեր զարդի համար։

Կար ժամանակ, երբ գիտնականներն անգամ բուստի մասին սխալ կարծիք ունէին և միմեանց հետ վիճում էին թէ արդեօք բուստը կենդանի է թէ բոյս։ Բայց ահա 150 տարուց աւելի է, ինչ որ այդ վէճը վերջացել է. այժմ էլ ոչ ոք չէ կասկածում բուստի կենդանի լինելում, որովհետև այժմ գիտեն թէ ինչպէս է նա սաղրում, ինչ է նրա կերակուրը, ինչպէս է նա իր սերունդը բազմացնում, ինչպէս է նա իր քարանիւթ առանցքը պատրաստում, որ ծախու է հանվում։

Այն բանի մասին, ինչ որ մարդիկ չեն իմանում, շատ առասպելներ են պատմում։ Այսպէս էլ էր բուստի մասին։ Մի առակի մէջ ասվում է, որ աշխարհում եղել է մի հրէշ, որ իր հայացքով ամեն բան քար էր դարձնում. այսպէս շատ տարիներ շարունակվում էր մինչև որ յայտնուել է մի հսկայ, որ այդ հրէշի գլուխը կտրել է։ Այն բոլորը, որոնց վրայ թափուել է հրէշի արիւնը և որոց դիպել է նրա գլուխը, քար են դարձել. բուստերը հէնց այդ քար դարձած բոյսերն են, ասում է առակը։

Առակի մէջ այսպէս է ասուած. բայց գիտնականներն անգամ մինչև անցեալ դարը կրկնում էին, որ ազնիւ բուստը բոյս է։ Այդ ժամանակի երևելի գիտնական Բէօմիւրն ասում էր որ «ինչպէս խխունջները կենդանիներից առաջացած քարեր են, այնպէս էլ բուստերը բոյսերից դարձած քարեր են»։ Սակայն կային և այնպիսի գիտնականներ, որոնք բուստը բոյս էլ անգամ չէին ուզում համարել, որովհետև նրանք հարցնում էին՝ բաս ո՞ւր են նրա արմատները, տերևները, ծաղիկները և այլն։ Այս միջոցին Ֆրանսիացի գիտնական կոմս Դէ Մարսիլին մի այնպիսի նոր գիւտ արաւ, որ մեծ աղմուկ հանեց ամբողջ գիտնական աշխարհում։ Այդ գիտնականը ծովից նոր հանած բուստի ճիւղը դրեց ջրով լի ամանի մէջ և տեսաւ որ ճիւղը, ինչպէս ինքն էր պատմում, ծածկուեց մեխակի նման սպիտակ ծաղիկներով։ Ամեն մի ծաղիկ ունէր պատուանդան և ութ հատ թերթեր։

Կոմս Դէ Մարսիլիի ուսանողներից մէկը՝ Պէյսոնէլ անու-

նով. Երիտասարդը սկսեց ուշադրութեամբ ուսումնասիրել իր ուսուցչի գաղծ բուստի ծաղիկը և եկաւ այն համոզմունքին, որ դրանք ամենևին ծաղիկները չեն, այլ կենդանիները են և բոլորովին նման են այն ժամանակ յայտնի ծովային կենդանիներին: Բայց և այնպէս այդ օրից դեռ էլի շատ տարիներ անցան, մինչև որ բոլոր գիտնականները բուստը կենդանի ճանաչեցին: Այս նրանից էր, որ գիտնականներից շատերն իրանց հետազօտութիւնները չոր կտորների վրայ էին անում և այդ կտորները նրանք ստանում էին հեռաւոր տեղերից և երբանք անձամբ երբէք կենդանի բուստ չէին տեսնում:

Արդէն ասուած էր, որ ծովից հանուած բուստը չէ երևում, թէ նա կենդանի է. բայց եթէ բուստի առողջ ճիւղը զգուշութեամբ կախ անենք ծովի ջրով լի ամանի մէջ, փոքր ժամանակից յետոյ կըտեսնենք, որ բուստի քարանիւթ փափուկ կեղևի վրայ եղած ամեն մի ուռուցքից մի-մի սպիտակ մարմին է երևում, որոնք աւելի և աւելի դուրս են ձգվում և ստանում են շիշի ձև: Մի քանի ժամանակից յետոյ շիշի բերանը բացվում է և մէջից ութ հատ շառաւիղներ են դուրս գալիս: Այս շառաւիղները վիտրաձև են և կոչվում են շօշափելիքներ որ ունին բուստի նման շատ կենդանիներ: Սպիտակ շիշերն ութ հատ շօշափելիքներով, սկզբում ծաղիկ էին համարում, երբ մարդիկ բուստը բոյս էին կարծում, բայց ամենապարզ փորձը մեզ համոզում է, որ նրանք կենդանիներ են: Արդարև, այդ կենդանիներն աւելի շուտով երևում են, կամ ինչպէս ասում են, բացվում են այն ժամանակ, երբ բուստին շրջապատող ջրի տաքութիւնը լինում է 3էլսի 12 մինչև 15 աստիճան: Եթէ փոքր ինչ սառը ջուր աւելացնենք՝ կենդանիները թաք կըկենան, թէև յետոյ և հարկէ նորից կարող են բացուել: Նմանապէս նրանք շուտով թաք կըկենան, եթէ մի բանով նրանց դիպչեն կամ ձեռք տան նրանց շօշափելիքներին: Բայց նրանց կենդանի լինելու աւելի լաւ ապացոյցն այն է, որ ամեն մի սպիտակ շիշ՝ իր ութ հատ շօշափելիքների մէջ տեղում, ունի բերանի ձեղք, որի միջով նա ընդունում է կերակուր: Եթէ ուշադրութեամբ զննենք



բուստի ճիւղն և սրա վրայ բացուած կենդանիներին շոշափելիքներով, կընկատենք որ այդ բոլոր կենդանիները հաւասար մեծութիւն չունին։ Նրանց մէջ կարելի է գտնել համեմատաբար հսկաներ, որոց մի շոշափելիքի ծայրից մինչև նրան հակադիր շոշափելիքի ծայրի տարածութիւնը հաւասար է մի քառորդ վերշոկի, երբ կենդանին շոշափելիքները բոլորովին բաց է անում. իսկ շատերի այդ տարածութիւնը հասնում է $^1/_{20}$ մինչև $^1/_{40}$ վերշոկի։ Մի և նոյն ճիւղի վրայ՝ բացի այդ տեսակ բոլորովին զարգացած կենդանիներից, կարելի է գտնել և շատ նորատիպիկ կենդանիներ, որոնք միմեանց ետևից աճում են հասունացած կենդանիների արանքներում։ Սրանք կոչվում են պտուկներ։ Մի և նոյն ճիւղի վրայ կարելի է տեսնել կենդանիների մի շարք զարգացման զանազան աստիճաններով՝ սկսած ամենափոքր սպիտակ բծից մինչև համարեա կատարելապէս զարգացած կենդանի։ Եթէ ծովից հանենք ոչ թէ ճիւղ, այլ բուսած ամբողջ ծառը, այնպէս, ինչպէս որ նա ապրում է ջրի տակ, կըտեսնենք որ վերև յիշուած պտուկները, որոնցից զարգանում են առանձին կենդանիներ, շատ թւով գտնվում են ճիւղի ծայրերին։ Եթէ լաւ էլի քննենք բուստի ճիւղը, կըհամոզուինք, որ նա աճում է երկայնութեամբ, այսինքն իր ծայրում, այնտեղից, ուր միմեանց ետևից կազմվում են պտուկները։ Վերջը պտուկները կատարեալ կենդանիներ են դառնում և սրանցից ամեն մէկին իրան մօտ իր բաժին փափուկ կեղև է կազմում։ Բայց մենք ստորև կըտեսնենք որ այդ կենդանիներից աճում է բուստի ոչ թէ միայն կարմիր փափուկ կեղևը, այլ և նրանցից պատրաստվում է քարանիւթ առանցքը, որ մեծ գին է տալիս այդ կենդանուն։ Մենք կըտեսնենք որ ամեն մի կենդանի հէնց իր ծագման բոպէից առանցքի վրայ թողնում է իր հետքը։ Եթէ առանցքն այսպէս է կազմվում նշանակում է որ նա սկզբում պէտք է լինի անկանոն ձևով։ Արդարև, մենք կըտեսնենք որ սկզբում նա անկանոն է, փուխը և անկիւնաւոր և միայն յետոյ ստանում է կանոնաւոր ձև։

Սրա համար մեզ հարկաւոր է ծանօթանալ բուստի ծառի բոլոր մասերին, այսինքն առանձին կենդանուն, կարմիր կեղևին և առանցքին։

Մենք տեսանք որ դրսից ամեն մի կենդանի ունի շիշաձև մարմին ուր հատ շոշափելիքներով, որոնց մէջ տեղը

գտնվում է բերանը։ Այժմ տեսնենք թէ ներսից կենդանին ինչ է ներկայացնում։ Եթէ կենդանուն կտրենք առիշեղ և երկայնութեամբ, կըտեսնենք որ նրա մարմինը ներսից այնքան էլ բարդ կազմուածք չունի, ինչպէս աւելի բարձր կենդանիների մարմինը։ Բայց և այնպէս այս փոքրիկ պօլիպի (այսպէս են կոչվում ազնիւ և միւս բուստերը) ներքին կազմուածքը շատ թէ քիչ կանոնաւոր է։ Մարմնի մէջ կարելի է տեսնել զանազան գործարաններ, որոնք կենդանու պարզ կենցաղավարութեան այս կամ այն պիտոյքների համար են

ծառայում։ Այսպէս, առաջ կըտեսնենք մի շատ կարճ խողովակ որ սկսած բերանից իջնում է կենդանու մարմնի խոռոչը. այդ խողովակը նման է բարձր կենդանիների որկորին, այսինքն ադիքային խողովակի այն մասին, որտեղից կերակուրն անցնում է ստամոքսը և աղիքները։ Բայց պօլիպը չունի ստամոքս և աղիքներ. նրա սննդառու խողովակը բաց ծայրով վերջանում է մարմնի խոռոչում։ Կենդանու մարմնի խոռոչը միակերպ պարզ չէ. նա բաժանուած է ութ սեռեակների առանձին միջապատերով, որոնք սկսում են կենդանու մարմնի մի կողքից և հասնում են նրա մէջ տեղը։ Սակայն այդ բոլոր միջապատերը մինչև խոռոչի մէջ տեղը չեն հասնում, այլ վերևում նրանք հասնում են մինչև սննդառու խողովակը, իսկ ստորին մասում ազատ են մնում։ Այդ պատճառով պօլիպի ամբողջ խոռոչը բաժանուած է ութ սեռեակների, որոնք վերևում միմեանցից հեռացած են, իսկ ստորին կողմում իրար կպած են։ Ութ հատ շոշափելիքներից ամեն մէկը դրսևից դրած է իւրաքանչիւր սեռեակի վրայ։ Եթէ համեմատենք պօլիպի կազմուածքը բարձր կենդանիների կազմուածքի հետ, կարելի է եզրափակել, որ սեռեակների բաժանուած նրա մարմնի խոռոչը նման է բարձր կենդանիների մի շարք գործարանների և ինչ որ այստեղ կատարվում

է առանձին առանձին գործարանների մէջ, պօլիպի մէջ նոյնը կատարվում է միանգամից մի և նոյն տեղում։

Գիտենք նոյնպէս, որ բուստերը խորասուզուած են կարմիր կեղևի մէջ. այս կեղևով ծածկուած են նրանց ճիւղերը կամ ամբողջ ծառը։ Դա մեռած բան չէ, որովհետև նրա մէջ են կազմվում պտուկները, որոնցից զարգանում են նորանոր կենդանիներ։ Այս բանը բաւական է, որ մեզ համոզէ, թէ կեղևը կենդանի մարմին է. և ինչպէս տեսնում ենք, նա կազմում է բուստի նշանաւոր մասը, որովհետև սրանից առաջ են գալիս նորանոր կենդանիներ և սրանից էլ աճում է ամբողջ բուստը, ուրեմն և սրա թանգագին առանցքը։ Այս առանցքն աճում է ոչ թէ միայն ըստ երկայնութեան, այլ և ըստ լայնութեան. այս բանը հասարակ փորձով էլ կարող ենք իմանալ։ Եթէ ճիւղի որ և է տեղից հանենք կեղև և մեզ այս փորձը յաջողի՝ կըտեսնենք որ ճիւղը չէ մեռնում, այլ շարունակում է աճել այն զանազանութեամբ միայն, որ կտրած տեղում առանցքը չի լայնանում, մինչ դեռ ուրիշ տեղերում նա լայնանում է։ Մենք գիտենք որ առանց սննունդի կեանք չի կարող լինել. ուրեմն ինչպէս և որտեղից է առնում կեղևն իր սնունդն և ինչպէս նա կարողանում է նպաստել առանցքի լայնանալուն. Այս խնդիրը հեշտ է լուծել, եթէ մենք աւելի մօտիկ ծանօթանանք կեղևի կազմուածքին։ Նախ և առաջ հարկաւոր է նկատել, որ բուստի առանձին կենդանիները կամ պօլիպները կեղևից բաժանուած չեն, այլ ընդհակառակն շատ էլ սերտ կերպով միացած են նրա հետ։ Իւրաքանչիւր կենդանու խոռոչից դուրս են գալիս և խորասուզվում են կեղևի մէջ խողովակաձև անօթներ և ճիւղաւորուելով նրա մէջ կազմում են անօթային անկանոն ցանց։ Այս անօթները տարածվում են ամբողջ կեղևի մէջ այնպէս, ինչպէս որ մեր մարմնի մէջ տարածվում են արեան անօթները։ Անօթային այս անկանոն ցանցը կողմնակի ճիւղերով միանում է մի ուրիշ ցանցի հետ, որ ունի այլ, բայց և կատարեալ կանոնաւոր դասաւորութիւն։ Այս երկրորդ ցանցը գլխաւորապէս բաղկացած է խողովակաձև անօթներից. սրանք զուգահեռաբար միմեանց անցնում են ամբողջ առանցքի շուրջը և տեղ տեղ միայն միանում են թէ իրար հետ և թէ վերին կամ անկանոն ցանցի անօթների հետ։ Սրանից յետոյ պարզ է, թէ ինչպէս է ապրում կեղևը և թէ սրա օգնու-

թեամբ առանցքն ինչպէս է աճում։ Այն ինչ որ բուստի պօլիպն ընդունում է իբրև կերակուր, մտնում է նրա խոռոչը և դառնում է կենդանու սննդարար հիւթ։ Այս սննդարար հիւթը միայն իրան կենդանու օգտի համար չէ նշանակուած, այլ նրա մի մասը վազում է ցանցի անօթների միջով, թափանցում է կեղևի ամենայն տեղերը, մինչև առանցքը, կամ լաւ է ասել, մինչև այն զուգահեռական անօթները, որոնցով շրջապատուած է առանցքը։

Այսպէս ուրեմն բուստի մէջ սննդարար հիւթերի աղբիւրն իրանք պօլիպներն են. սրանք իրանց շօշափելիքներով որսում են մանր կենդանիներ, սրանց մարսում են և դարձնում են սննդարար հիւթ, որը վազում է նրանցից բուստի ճիւղի և ամբողջ ծառի միջով և այդպէս պահպանում է նրանց կեանքը։

Վերևում մենք տեսանք որ բուստը բաղկացած է փափուկ կեղևից և քարանիւթ կմախքից. տեսանք նոյնպէս, որ քարանիւթ կմախքը կազմում է կենդրոնական առանցք, որ տալիս է կողմնակի շառաւիղներ։ Այս շառաւիղներից ամեն մէկը նոյնպէս կազմում է իրա ճիւղի կենդրոնական առանցքը։ Տեսնենք այժմ թէ բուստի ամբողջ կմախքը կազմուած է արդեօք միայն այդ կենդրոնական առանցքից և ճիւղերից, թէ էլի ուրիշ բանից։

Եթէ խոշորացոյցով զննենք բուստի փափուկ կարմիր կեղևը, կընկատենք, որ նա ամբողջապէս ծածկուած է ուռուցքի նման փոքրիկ կարմրագոյն մարմիններով։ Այս մարմիններն այնքան փոքր են, որ նրանցից ամենամեծը լինում է մօտաւորապէս վերշոկի $^1/_{700}$ մասը։ Զնայելով որ այդ մարմիններն այդքան մանր են, այնու ամենայնիւ կեղևի կարմիր գոյնը կախուած է նրանցից։ Որ կեղևի գոյնը կախուած է այդ մարմիններից, հաստատվում է նրանով, որ կեղևը կարմիր է երևում երբ միայն բուստը կենդանի է, երբ նրա անկուածը բոլորովին թափանցիկ է և կարմիր մարմինները նրա միջից երևում են։ Բայց երբ բուստը սատկում է՝ նրա անկուածը պղտորվում է, դեղնում է և կեղևի գոյնը փոխվում է, որովհետև կարմիր մարմիններն այլ ևս չեն կարող թափանցել նրա միջից։ Հէնց այդ մարմինները կազմում են կեղևի կմախքը. նրանք քարի պէս պինդ են և գլխաւորապէս բաղկացած են այն նիւթից, ինչ նիւթից որ բաղկացած

է մարմարիոնը, այսինքն ածխաթթուային կրից։ Այդ կրային նիւթերը նոյնպէս ցրուած են թէ բուսոյ կենդանիների և թէ նրա կեղևի մէջ։ Սակայն մեզ աւելի հետաքրքիր է բուսոյ առանցքը, այսինքն բուսոյ քարանիւթ հիմքը, որից մարդիկ օգուտ են քաղում։ Այդ առանցքը նոյնպէս բաղկացած է կրային նիւթից. սակայն սրա մէջ այդ նիւթերը ցրուած չեն, այլ միացած են միմեանց հետ կրային ցէմենտով։ Այս բանը շատ հեշտ է նկատել եթէ կտրենք առանցքից մի շատ բարակ թիթեղ և նայենք նրա վրայ խոշորացոյցի տակ։ Այս դէպքում մենք կըտեսնենք որ բուսոյ առանցքի գոյնը, ինչպէս և կեղևինը, կախուած է միայն այդ փոքրիկ մարմիններից։ Այսպէս ուրեմն բուսոյ ծառի ամբողջ մարմնի մէջ ցրուած են կմախքի կտորներ և միայն ծառի բնի և նրա ճիւղերի մէջ այդ կմախքը ցէմենտի օգնութեամբ ամրանում է, կազմելով ընդհանուր առանցք։

Վերևում համառօտ կերպով մենք ծանօթացանք բուսոյ ծառի կազմուածքին։ Ի՞նչպէս է առաջ գալիս այդ ծառը։ Մենք տեսանք և համոզուեցանք, որ բուսոյը կենդանի էակ է, կամ ուղիղ ասած՝ բուսոյ ծառը մի խումբ կենդանիներ են, որոնք ի միասին ապրում են և որոնց մարմինները մասամբ բաժանուած են, մասամբ միացած են իրար հետ այնպէս, որ դժուար է լինում որոշել, թէ որտեղ է վերջանում մէկ կենդանին և որտեղ է սկսվում միւսը։

Եթէ բուսոյը կենդանի էակ է, ուրեմն նա պէտք է առաջ գայ մի ուրիշ կենդանուց։ Արդարև այս այսպէս է։ Դիտնականները հետազօտելով բուսոյը, գտան որ նա պատկանում է այն կենդանիների տեսակին, որոնք կենդանածին են։ Նորածին կենդանին բոլորովին նման չէ իրա մօրը, այսինքն ուրիշ հատ շօշափելիքներ ունեցող շիշաձև պօլիպին։ Նա մի տեսակ որդ է, որի մի ծայրը սուր է, միւսը՝ լայն։ Սուր ծայրը կենդանու առջևի մասն է կազմում, որովհետև այնտեղ է գտնվում նրա բերանի ճեղքը։ Բուսոյ—որդը՝ դուրս գալով մօր բերանի ճեղքից, սկսում է լող տալ իր վրայ գտնուած մազմզուկների օգնութեամբ, ետևի ծայրը միշտ առջևից պահելով։ Այսպէս երկու շաբաթ շարունակ ջրի մէջ լող տալուց յետոյ՝ որդը վերջապէս գտնում է մի յարմար տեղ և նրան ամուր կպչում է և այդտեղ յաւիտեան կախ է ընկնում բերանքսի վայրը։ Կպչելուց յետոյ նորածին բուսոյը սկսում է

արագ փոխուել՝ նա այլ ևս որդ չէ. նրա բերանի շուրջը դուրս են գալիս շոշափելիքները և սակաւ առ սակաւ բոլորովին նըմանվում է իրա ծնող պօլիպին։ Այսպէս ուրեմն այն սպիտակ որդերն, որոնք ժամանակ առ ժամանակ դուրս են գալիս բուստի Ճիւղերի պօլիպներից, վերջը իրանք էլ պօլիպներ են դառնում։ Այժմ հեշտ է հասկանալ, որ պատրաստ բուստերից առաջ եկած նորածին պօլիպները նոր բուստի ծառի հիմք են դառնում։ Այսպէս էլ լինում է։ Երբ նորածին բուստը ստանում է շոշափելիքներ, նա արագ մեծանում է. նրա ստորին մասը սկսում է աւելի և աւելի կարմրել, որովհետև նրա մէջ մեծ քանակութեամբ կազմվում է մեզ լաւ յայտնի կրային նիւթը։ Այդ ստորին մասն աւելի զանազանվում է վերին մասից, որի վրայ գտնվում են բերանն ու շոշափելիքները։ Վերին մասը կարող է ներս քաշուել ստորին կարմիր մասի մէջ այնպէս, ինչպէս որ պատրաստ բուստի պօլիպները ներս են քաշվում բուստի Ճիւղերը ծածկող կարմիր կեղևի մէջ։ Այսպէս բուստ—որդը արդէն դարձաւ բուստի ծառի հիմք. նրա մէջ տեսնում ենք այն ամենայն բանը, ինչ որ տեսանք և ծառի մէջ. այսինքն՝ կարմիր փափուկ կեղև և առանձին կենդանի, որ միայնակ է այդ սկզբնական ծառի վրայ։ Նրա մէջ կարող ենք տեսնել և՛ բուստի ծառ կամ Ճիւղ կազմող երբորդ մասի հիմքը, այն է առանցքի հիմքը։ Բայց սա այստեղ պայտի ձևով է երևում, որովհետև ծառի վրայ գտնվում է միայն մի կենդանի։ Այս պայտը բաղկացած է մեզ յայտնի կարմիր կրային մարմիններից, որոնք ցրուած են նորածին բուստի կարմիր մասի մի կողմում և իրար հետ շատ թոյլ կերպով կպած են ցեմենտով։ Այս սկզբնական ծառն ինչպէս է դառնում արդեօք մեծ բուստ։ Սրա պատասխանը շատ կարճ է։ Այս բոլորովին այնպէս է լինում, ինչպէս որ պատրաստի բուստի Ճիւղերը աճում են երկայնութեամբ։ Առաջին պօլիպի կողքից, փոքր ինչ վերև՝ միմեանց ետևից՝ երևում են պատվները. սրանցից ամեն մէկը դառնում է պօլիպ և կազմում իրա բաժին կարմիր կեղև և մի-ջին առանցքի մաս։ Առանցքի մասը կազմվում է միմեանց վրայ դարսուող պայտերից, որ մի կողմում պատրաստում է ամեն մէկ պօլիպ։ Սրանից է որ սկզբում առանցքն անկանոն ձև ունի և փուխր է. նա բաղկացած է հազիւ իրար հետ միացած առանձին առանձին պայտերից։ Երբ նոր ծառի փա-

վուկ կեղևի մէջ մեծ թւով բազմանում են պոլիպները, այն ժամանակ կազմվում է սննդարար խողովակների այն երկու ցանցը, որի մասին վերև յիշեցինք։ Սրանց միջով սկսում է հիւթը հոսել, որից օգուտ է քաղում բոլոր ծառը։ Այս հիւթի հետ գալիս է և կրային նիւթը, որից կազմվում են նորանոր մարմիններ և ցէմենտ։ Սկզբնական առանցքի անկանոն ձևերը կրային նիւթի օգնութեամբ փոքր առ փոքր հարթվում են և ի վերջոյ առանցքն ստանում է կանոնաւոր կլոր ձև, որ յայտնի է ամեն մէկին ով որ միայն տեսել է բուստը մաքրած և ոչ թէ կոկած և նրանից զարդեր շինած։

Բուստի կազմութեան և նրա բնական պատմութեան հետ ծանօթանալուց յետոյ, խօսենք այժմ նրա որսալու եղանակի և վաճառման մասին։

Բուստերը որսում են Միջերկրական ծովում և գլխաւորապէս Ալժիրայի ափերի մօտ։ Նրանց որսալու համար շինում են առանձին նաւեր։ Այդ նաւերը մեծ չեն. նրանցից ամենամեծը կարող է վեր առնել իր վրայ 10—12 մարդ. բայց կան և այնպիսիները, որոնց մէջ կարող են նստել միայն 3—4 մարդ։ Բուստերը որսում են առանձին կերպով շինած ցանցերով, որ քաշ են տալիս ծովի յատակի վրայ։ Սրբանցից երևում է որ ցանցը պէտք է կպչուն լինի։ Ինչպէս յայտնի է մեզ բուստերն ապրում են ծովի տակ. այնտեղ նրանք կպած են որ և է առարկայից։ Ուրեմն նրանց ոչ թէ պէտք է որսալ, այլ պէտք է պոկել քարերից։ Եթէ սրա հետ յիշենք որ բուստերն ապրում են ծովի մէջ 40—50 սաժէն խորութեամբ, այն ժամանակ հեշտ է հասկանալ, թէ որքան դժուար է լինում այդ չափ խորութեամբ քաշ տալ ցանցերը ծովի մէջ. չմոռանանք և այն, որ այդ ծանր աշխատանքը աւելի դժուարանում է, որովհետև բուստերի որսը կատարվում է ամբրիկական ամենաշոգ ժամանակին։ Միւս կողմից պէտք է ասել, որ ցանցի քաշ տալը՝ ինչպէս և ամենայն հասարակ աշխատանք որ բացի ոյժից ոչինչ աւելի չէ պահանջում, շատ էժան է գնահատվում և տևում է վեց ամիս (բանւորները հանգստանում են միայն օրական վեց ժամ քնելու համար)։ Այս աշխատանքն այնչափ ապերախտ գործ է, որ մինչև անգամ առած կայ հնարած, որ ասում է թէ՝ «Բուստ որսող դառնալու համար պէտք է գող և աւազակ լինել»։

Ծովի տակ քաշ տուած ցանցը կազմուած է հետևեալ կերպով՝ երկու փայտէ ձող (մեծ ցանցի ամեն մէկ ձողի երկայնութիւնը լինում է մի սաժէն) կապում են միմեանց վերայ խաչաձև. խաչի մէջ տեղից ծանրութեան համար քար են կապում որ ցանցը ծովի տակ անեն: Իսկապէս բուստերը որսող ցանցը բաղկացած է մի խուրձ ցանցերից, որոնք կըպած են խաչից: Սկզբում պատրաստում են մատի հաստութեան թոյլ ոլորած թոկից ցանցեր խոշոր աչքերով. ամեն մի այդ տեսակ ցանցի միջից թոկ են անց կացնում և սրա օգնութեամբ ցանցը հաւաքում են ու ծալում: Այսպէս պատրաստած ցանցեր յետոյ խրձաձև կապում են: Եթէ ցանցի խաչը մեծ է, նրա ծայրերից և մէջ տեղից կապում են մինչև 38 խուրձ փոքր ցանցեր. Երբ այսպէս կազմած ցանցը քաշ են տալիս ծովի տակը, կարծես տասնեակ ձեռքեր սողում են յատակի վրայ: Այս ձեռքերն ի հարկէ աշխատում են կուրօրէն և շոշափմամբ. սրանք շատ կպչուն լինելով որսում են ամենայն լինչ պիտանի և անպէտք, լինչ որ նրանց պատահում է ճանապարհին: Օրուայ մէջ 7—15 անգամ դուրս են քաշում ծովից ցանցը նաւի վրայ և նրա միջից հաւաքում են այն լինչ որ հարկաւոր է և պիտանի, յետոյ ցանցը նորից ծովն են ձգում: Շարունակ վեց ամիս այսպէս նրանք աշխատում են. աշխատող նաւը բոլոր ժամանակ ծովի մէջն է և եթէ միայն նա ափին մօտենում է, այն էլ կարկատանքի կամ պաշարեղէն վերցնելու համար: Ի հարկէ նաւապետին ծանօթ պէտք է լինի ծովը որ լմանայ բուստերը որսալու տեղը:

Բուստի որսը վաճառականութեան ամենաարդիւնաւոր ճիւղն է: Որսած բուստի քանակութիւնն լմանալու համար վերցնենք ամենաճիշտ թուերը որ ցոյց է տալիս այդ գործի տարեկան արդիւնքը: Այժերայում 1860 թուին այդ գործով զբաղուած է եղել 204 նաւ. որսել են 1868 փութ բուստ, որ արժէը 362,237 ռուբլի 50 կոպէկ: Այս գումարից կարելի է դուրս բերել թէ բուստի ամեն մի փութը միջին թուով արժէ 194 ռուբլի, կամ մի գրուանքան մօտ 5 ռուբլի: Անտաշ բուստի գլխն իսկապէս զանազան է. նա կախուած է ճիւղի մեծութիւնից և գոյնից: Կան բուստեր որոնց մի գրուանքան արժէ 50 կոպէկ, բայց կան և այնպիսիներ, որոնց գրուանքան ծախվում է 50 ռուբլիով. մի կողմ թողնենք այն, որ մի

փոքը կտորի համար տալիս են ահագին գումարներ։ Շատ թանկ են վարդագոյն բուստերը։ Ինչ ասել, որ չտաշած ու չկոկած բուստի գինը համեմատաբար ոչինչ է նրանից շինած զարդերի ու իրերի գնի հետ։ Սրանց գինը ուղիղ կախուած է շինքից։ Մօտաւորապէս կարելի է ասել որ կոկած ու տաշած բուստը 5—6 անգամ թանկ է բնական բուստից։

Թէև եւրոպացիք սիրում են բուստից շինած զանազան զարդերը, բայց նրանցից յետ չեն մնում և արևելեան ազգերը։ Աբարիոյ մի քանի տե երում բուստից շինած զարդերը մինչև անգամ թաղում են մեռելների հետ՝ այնքան մեծ է բնակչաց սէրը դէպի այդ թանգագին իրը։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՔԻՇՄԻՇԵԱՆՑ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապակենման թաւիանցիկ թուղթ։ Մի երիտասարդ ճապոնացի, որ իր ուսումն ստացել է Փարիզու լիցէյում, վերջին օրերս մի շատ հետաքրքրական դիւտ է արել։ Նա գտել է ծովային բոյսերից շատ հաստ եւ մի եւ նոյն ժամանակ բոլորովին՝ թափանցիկ թուղթ շինելու հնարը։ Այդ թղթին ինչ հաստութիւն՝ ուզէք կարող էք տալ. հեշտ ներկվում է զանազան գոյներով եւ նրա վրայ կարելի է ձեւակերպել հին գեղանկարների նմանութիւնը։ Բացի դրանից, նոր հնարած թուղթը կարելի է գործածել ինչպէս պատուհանի ապակի։ Ինչպէս հաւատացնում է դրա հնարողը, ջուրը, խոնաւութիւնը դրա վրայ ոչինչ ազդեցութիւն չեն կարող ունենալ։

—

Գազացած ջրի տեղափոխութիւնը։ Աշխարհահռչակ Պաստէօրի եղբօրորդի երիտասարդ քիմիկոս Պաստէօրը նորերս մի շատ յաջող գործադրութիւն արաւ մի նշանաւոր քիմիական գիւտի, որն առաջուց յայտնի էր։ Պաստէօրին յաջողուեցաւ ջուրը տեղափոխել մի տեղից միւս տեղ գազի ձեւով, այսինքն լուծած նրա բաղադրիչ մասերին, այն է—թթուածնի եւ ջրածնի։ Որովհետեւ վերջինս առաջինից տասն եւ վեց անգամ թեթեւ է եւ կարող է տեղաւորուիլ օդապարիկներում, այդ պատճառով ուղտերի մեծամասնութիւնն իսկապէս պէտք է թթուածին կրեն, որով մի եւ նոյն ժամանակ կարելի է եւ լուսաւորել քարավանի ճանապարհը մութ գիշերներին։ Անհրաժեշտ բոպէին հարկաւոր է խառնել երկու գազերը եւ քարավանը կունենայ ջուր։ Ֆրանսիական կառավարութիւնը Պաստէօրի այսպիսի յաջող գիւտի համար շնորհել է նրան «Պատուոյ Լէգէոնի» շքանշանը։

—

Անուշահոտ քացախ սենեակների համար։ Լաւ քացախի մէջ պէտք է ածել այնքան չհանգչած (չոր) կիր, որքան կարող է հանգցնել քացախը. յետոյ հեղուկ մասը պէտք է թափել, իսկ մնացած թանձր տականքը չորացնել օդում կամ վառարանում։ Այդ խառնուրդի մի կրտորը եթէ ձգէք սրուկիի մէջ եւ վրան կաթեցնէք մի կաթիլ ծծմբաթթու կառաջանայ գոլորշի, որ ասվում է, անուշահոտ քացախի ծուխ։

—

Զմեռը, սենեակում մարգագետին։ Մի ափսէի մէջ պէտք է դնել մի շերտ բամբակ, թրջել ջրով, ցանել դրա վրայ զարի հաւասարապէս եւ խիտ եւ դնել պատուհանում ու ամեն օր շարունակ թրջել։ Երկու շաբաթից կերեւան ծիլեր եւ շուտով բամբակի ամբողջ մակերեւոյթը կծածկուի թարմ կանաչով։

ՀԱՅԵՐԷՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

այոց մէջ այժմ հրատարակվում են հետևեալ լրագիրները և ամսագրերը։

Կ. Պոլսում.—Արևելք, Մասիս, Աւետաբեր, Աւետաբեր Մանկանց, Բիւրակն, Բուրաստան Մանկանց, Գիտական Հարժում, Երկրագունդ, Հայրենիք, Հնչուկ, Հարժում, Փունջ, Տնտես և Լեզու։ Զմիւռնիա.—Արևելեան Մամուլ։ Ս. Էջմիածին.—Արարատ։ Թիֆլիս.—Աղբիւր, Մշակ, Արձագանք, Նոր-Դար։ Մարսէյլ.—Արմենիա։ Վենետիկ.—Բազմավէպ։ Վիեննա.—Հանդէս ամսօրեայ։ Ընդ ամենն Հայերէն պարբերական հրատարակութիւններ ամբողջ Ազգի մէջ լոյս են տեսնում այս 1887-ին քսան և երեք հատ։ Դրանցից ամենից մեծն է Արևելք, իսկ ամենից հինն է Բազմավէպ 1842 թուից սկսած։ Պատկերազարդներն են Բուրաստան Մանկանց և Աղբիւր։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Մ. Ա.

Ցերեկը քնում է,
Գիշերը նայում,
Առաւօտը մեռնում է,
Երեկոյեան զարթնում։

Առաջ. Նոյն

Երբ ինձ չեն իմանում,
Իմանալ են ուզում,
Իսկ երբ իմանում են,
Ձուտով էլ մոռանում են։

ԿԱՐԴԱՑԷՔ ՈՒՄ ԱԶԳԱՆՈՒՆՆ Է.



Առաջ. Ա. Սարգարեանի

	*	*	Ժամանակ.
Գ	*	*	Բայ է չեղոքական (գրաբառ).
Գ	*	*	Գոյական անուն.
Թ	*	*	Գոյական անուն (գրաբառ).
Ժ	*	*	Գոյական անուն. Հիմնարկութիւն.
Ժ	*	*	Ժամանակ.
Լ	*	*	Բայ չեղոքական (գրաբառ).
Ծ	*	*	Գոյական.
Կ	*	*	Բայ չեղոքական (գրաբառ).
Կ	*	*	Շաղկապ.
Հ	*	*	Գոյական.
Մ	*	*	Գոյական.
Շ	*	*	Գոյական անուն. քաղաք. յատուկ.
Ստ	*	*	Ներգործ. բայ.
Ք	*	*	Յատուկ անուն.

ԳՏԷԲ ԱՍՏՂԱՆԻՇ ԲԱՌԸ։

ՀՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Ֆուռ ծառին ծառի ծաղիկ։

ՐԵԲՈՒՍ





Նախընթաց №-ի մէջ եղած Հանելուկի, րեբուսի և առաջարկութեան բացատրութիւնը։ Հանելուկի բացատրութիւնը՝ Հեռագիր։ Ռեբուսի բացատրութիւնը՝ Պատմութիւն ուսումնասիրողը մեծ մարդ կարող է դառնալ։ Առաջարկութեան բացատրութիւնը՝ «քանի» բառն է, որի սեռականը կազմվում է Սի մասնիկով—քանիսի. Ղարաբաղի բառբառում «լոխ» բառն է, որի սեռականը լինում է «լոխչու»։ Միավանկ Ի վերջաւորուած բառերից սեռականում Ի-ն չի կորչում, ինչպէս ձիու, թիու...

«ԱՂԲԻՒՐԻ» № 4-ՈՒՄ ՏՊՈՒԱԾ ԲԵՌՈՒՍԸ ՈՒՂԻՂ ՎՃՌԵԼ ԵՆ *)

1) Աղբաշէն տ. ԱՆՆԱ ԱՂԱՍԱՐԵԱՆՑ.
2) Ղուշու պ. Մերզա ՏԷՐ-Սարգսեանց.
3) Թաբրիզ » Զաքարիա Նազարբէկեանց.
4) Գանձակ » Նիկոդայոս Բաբաքեխեանց.
5) Թիֆլիս օր. Մարգարիտ Բաբայեան.
6) Աստրախան » Գայիանէ ՏԷՐ-Խաչատրեանց.
7) Թիֆլիս պ. Սեմէօն Ղիսեան.
8) Ախալցխայ » Յովհաննէս Ս. Գրիգորեան.
9) Երևան » Յարութիւն Զախմախսազեանց.
10) » » » Յովհաննէս ՏԷՐ-Մարտիրոսեան.
11) Թիֆլիս օր. Մարգարիտ Մելիք-Բէգլարեան.

Պատմութիւն ուսումնասիրողը մեծ մարդ կարող է դառնալ

ՍԽԱԼ ՈՒՂԱՐԿԵԼ ԵՆ.

Թիֆլիս՝ պ. Սրամ Առվանեան այսպէս՝ Այս պատմութիւն մանուկներս։ Ո մեծ մարդ չէ մեքենայ դարձնողը։

» » Արմենակ Մառանջեանց, Պատմութիւն գրողը մեծ մարդ կարող է դառնալ։

Մուշու՝ (Հեռագրով) տ. Նինա Զարդարեանց. Մեզ շրջապատ բնութիւն ուսումնասիրողը մեծ մարդ կարող է դառնալ։

Սալմաստ Օր. Նատալիա Եարեանց. Պատմութեան դրոշակի ծառայողը մեծ մարդ կարող է դառնալ։

Գանձակ Միքայէլ Խաչումեանց. Պատմութիւն մարդասիրողը մեծ մարդ կարող է դառնալ։

» » Օր. Շուշանիկ Թեմուրեանց. Պատմութիւն գրող մարդը մեծ մարդ կարող է դառնալ։

*) Վճռող անձանց անունները դասաւորուած են ոչ թէ մեր ստացածին պէս, այլ հաստատ տեղեկանալով, թէ ուր որ օր է ստացուած «Աղբիւրի» № 4-ը եւ ով՝ իր ստացած օրից հաշուած՝ շուտ է վճռել։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ